ԷՋՄԻԱԾԻՆ

1982

Թ. 2



ԼԹ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Մայիս - Յունիս

1982

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԵՐԵՍ ԴԵ ԿՈՒԵԼԼԱՐԻՆ՝ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ՝ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԿ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԵՐԵՍ ԴԵ ԿՈՒԵԼԼԱՐ

Նյու Յորք

Աստուծո ողորմությամբ Մենք առաջին սպասավորն ենք աշխարհիս հնագույն Եկեղեցիներից մեկի՝ Հայ Առաքելական Եկեղեցու:

Այսօր, երբ իր աշխատանքներն է սկսում վինաթափման ընդհանուր ժողովը իր երկրորդ նստաշրջանում, Մենք սրբական պարտք ենք համարում Ձեզ և վինաթափման ժողովի մասնակիցներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուղարկել Տիրոջ օրհնությունը, Մեր քրիստոնեական ողջույնը և սրտագին մաղթանքը, որ բոլոր պետությունների ընդհանուր համերաշխ գործակցությամբ հաջողությամբ պսակվի վինաթափման համամարդկային իդեալի կենսագործումը ի մեծ մխիթարություն համայն մարդկության:

Աղոթում ենք, որ Աստուծո խաղաղարար Սուրբ Հոգին վորավիգ և առաջնորդող լույս լինի ժողովին:

Երանի՜ խաղաղարարաց այժմ և հավիտյան. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 հունիսի 1982 թ.



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ 7 ՀՈՒՆԻՍ 1982 ԹՎԱԿԱՆԻ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ՝ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԿ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ ՈՒՂԱՐԿԱԾ ՀԵՌԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Նյու Յորք

Ձերդ Սրբություն,

Մեծ հաճույք է ինձ համար հաստատել Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված 8 հունիս 1982 թվակիր հեռագիրը, որով Ձերդ Սրբությունը Իր օրհնությունն էր հղում զինաթափման հարցին նվիրված գլխավոր ասամբլեայի երկրորդ հատուկ նստաշրջանին, որը բացվեց 1982 թվականի հունիսի 7-ին Նյու Յորքում:

Համաձայն հաստատված այն կարգի, որ վերաբերում է զինաթափման և երկրորդ հատուկ նստաշրջանի մասին ոչ կառավարական կազմակերպություններից ստացված գրություններին, Ձերդ Սրբության հեռագիրը պիտի հանձնվի գլխավոր ասամբլեայի ուշադրությանը:

Զինաթափման հարցով զբաղվող կենտրոնը բարձր է գնահատում այն օգնությունը, որ աշխարհի ժողովուրդները կարող են բերել զինաթափման գործին: Մենք միայն կարող ենք մեր գոհունակությունը հայտնել այդ գործի նկատմամբ Ձերդ Սրբության ցույց տված հետաքրքրության և այդ նպատակով նրա բերած նպաստի համար, որոնք մեծապես քաջալերական են:

Խնդրում եմ, Ձերդ Սրբություն, ընդունել իմ խորին հարգանքների հավաստիքը:

ՅԱՆ ՄԱՐՏԵՆՍՈՆ
ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Նյու Յորք,
11 հունիսի 1982 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

(10 մայիսի 1982 թ.)

Եղբայրներ Մեր սիրելի,

«Եւ ասաց Աստուած՝ եղիցի լոյս և եղև լոյս»:

Լույսի ստեղծումը Աստուծո առաջին խաղաղարար գործը եղավ, որով քաոսը վերածվեց Կոսմոսի, այսինքն ներդաշնակության: Անձև ու խավար անսահման տարածության խառնարանը՝ լույսով՝ վերածվեց մի տիեզերական ներդաշնակ ու օրինաչափ դրության:

Սուրբ Գիրքը, «եղիցի լոյս»-ից սկսյալ մինչև իր վերջին շունչը, աստվածային խաղաղարար մի տնօրինություն է: Աստված նույնիսկ իր Որդին աշխարհ ուղարկեց խաղաղության պատգամով, նոր լույսով փարատելու համար քաոսը մարդկային հոգեկան աշխարհի, այնտեղ ևս ստեղծելու՝ խաղաղ, ներդաշնակ ու օրինաչափ մի դրություն:

Հիսուս՝ լինելով արեգակ արդարության, եղավ իշխան խաղաղության:

Հիսուս, եղավ մի նոր «եղիցի լոյս» մարդկային հոգեկան տիեզերքի մեջ, նույն աստվածային արարչագործ տնօրինությամբ:

Խաղաղության ու արդարության ավետաբերներ են եղել նաև այլ մեծ կրոնների հիմնադիրները, նաև շատ իմաստուններ ու փիլիսոփաներ, Սոկրատեսից մինչև Էմմանուել Քանդ և մինչև մեր օրերը:

Ակներև է, թե մարդկանց հավաքական կյանքում, խաղաղ ու արդար հարաբերությունները արգելակող, խաթարող ուժերը, մարդկային եսակենտրոն

ձգտումներն են հանդիսանում, մանավանդ՝ տիրապետելու կիրքն ու հարստանալու տենչը:

Ինքը Հիսուս և իր մեծ առաքյալը Պողոս մատնանիշ են անում այս երկու թունավոր արմատները՝ պատգամելով բոլոր ժամանակների մարդկանց՝ «Ով կամենա ձեր մեջ առաջինը լինել, թող նա բոլորին լինի սպասավոր» (Մարկոս Ժ 44) և «արծաթասիրությունն է արմատը ամենայն չարյաց» (Ա Տիմ. Զ 10):

Քրիստոսի հոգին կրող սուրբ մարդիկ բազում անգամներ նույն այս պատգամներն են քարոզել իրենց ժամանակակիցներին:

Արդարության և խաղաղության ոգով համակված են եղել նաև պետական մարդիկ, մանավանդ առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո: Մեր օրերին բոլոր պետությունները և բոլոր ժողովուրդները գիտակցում են ու ընդունում, թե պատերազմը համաշխարհային չարիք է, մի անեծք է մարդկության գլխին: Հույժ մխիթարական է հաստատել, թե այս ոգին իր հստակ արտահայտությունն է գտել Միացյալ Ազգերի Կազմակերպության բոլոր հիմնական փաստաթղթերի մեջ:

Ինչպես գիտեք, 1945-ի հայտարարության մեջ ասված է, թե Միացյալ Ազգերի Կազմակերպությունը պետք է լինի մի միջազգային կազմակերպություն՝ նպատակ ունենալով «ապագա սերունդները հեռու պահել պատերազմի չարիքից»:

Եվ այստեղ թույլ տվեք հիշել, թե պատերազմների ընթացքում ծանր է լինում ճակատագիրը նաև փոքր ժողովուրդների, որոնք առանց որևէ պատասխանատվություն ունենալու, ոտքի կոխան են դառնում և երբեմն առավել մեծ զոհեր են տալիս, քան թե պատերազմող պետությունները: Այդպես եղավ, օրինակ, ճակատագիրը մեր փոքրիկ ազգի, հայ ազգի, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, երբ նրա կեսը զոհ գնաց 1915-ի ցեղասպանության Արևմտյան Հայաստանում: Արդյոք մենք այսօրվա մարդիկս պիտի համակերպվե՞նք, որ նման սպանդներ կրկնվեն:

Անցյալ ողբերգությունների փորձը թող ուղեցույց լինի բոլորիս և մանավանդ պետությանց ղեկավարներին, որպեսզի չհրահրվեն նոր պատերազմներ, որոնք այս անգամ լինելու են առավել ահավոր չափերով աշխարհակործան:

Իբրև քրիստոնյա մի Եկեղեցու առաջին սպասավոր, խոսելով խաղաղության մասին, Մենք բնականաբար հավատում ենք, թե այն իրագործելի է Հիսուսի Ավետարանի և բարոյական սկզբունքների ներգործությամբ: Հավատում ենք, թե այդ է ուղիղ ճանապարհը բարեշրջելու մարդկային հոգեկան աշխարհը, պոկելով այնտեղից թունավոր արմատները եսակենտրոն մղումների:

Աստվածային պատգամն է՝ որ փշրվեն քարե սրտերը ու մարդիկ և ազգություններ որ սիրտ ու ոգի զգեցած, իրենց կյանքի ճանապարհին՝ արդարությամբ և խաղաղությամբ գործեն, որ արդարությամբ՝ խաղաղություն լինի, որ խաղաղությամբ՝ արդարություն լինի:

Հավատում ենք, այո՛, թե հնարավոր կլինի տակավ իրականացնել ցանկալի բարեշրջումը մարդկանց գիտակցության, համաշխարհային չափերով դաստիարակչական աշխատանք ծավալելով բոլոր ազգերի ծոցում, հիմնական նպատակ ունենալով ամեն մարդու ներշնչել նրա իրավունքը՝ խաղաղ ապրելու և պարտականությունը՝ պաշտպանելու իր նմանների խաղաղ ապրելու իրավունքը: Մարդու իրավանց գերագույնը, կարծում ենք, պետք է նկատել՝ իրավունքը խաղաղության:

Ժողովուրդների սրբական իրավունքն է, այո՛, ընտրելու խոփը կամ սուրը:

Այսօր մեր աշխարհի ժողովուրդների լայն զանգվածները ընտրում են խոփը և բարձրաղաղակ մերժում են իրենց ձեռքը դնել սրի վրա:

Մենք հոգևորականներս պետք է օրհնենք ու զորացնենք սուրը մերժող ձեռքերը:

Մենք հոգևորականներս, ատոմական ահարկու ուժերի սանձազերծման այս դարաշրջանում, պետք է ներշնչենք մեր հավատացյալներին, թե երկրագնդի բոլոր ազգերը, մեկ Աստուծո ժողովուրդ են, մեկ եղբայրություն, մեկ համամարդկային ընտանիք, մեկ ճակատագիր, մեկ ապագա: Մեր առջև դրված հարցն է՝ ի՞նչ ապագա պետք է կերտենք մեր զավակների և թոռների համար:

Մենք քրիստոնյաներս, մեկ սրբական իղձ ունենք մեր սրտերում և մեկ նվիրական աղոթք մեր շրթներին, որ մեր Տիրոջ և Փրկչի Հիսուսի խաղաղարար ոգին բաշխվի առատապես բոլոր մարդկանց և մանավանդ պետությանց պատասխանատու ղեկավարներին, որպեսզի ազգությունների միջև խաղաղ գոյակցությունը պահպանվի և ամրապնդվի, որպեսզի խորտակվեն պատերազմի բոլոր տեսակի զենքերն ու գործիքները, որպեսզի մայրերը այլևս չարտասվեն ու երեխաները հանգիստ քնեն և, որպեսզի մարդիկ ամեն առավոտ իրար ողջունեն բարի լույսի ավետումով:

Սիրեցյալ Եղբայրներ, Մենք բոլորս որ հավաքված ենք այստեղ, տոգորված ենք խաղաղության և արդարության համամարդկային ազնիվ իդեալներով կամենում ենք մեր նպաստը բերել ի խնդիր միջազգային լարվածության թուլացման, ի խնդիր սպառազինությունների սահմանափակման և ամեն տեսակի քաղաքական միջազգային հարցերի լուծման միմիայն խաղաղ ճանապարհով, բոլոր պետությունների համերաշխ գործակցությամբ, քայլ առ քայլ կենսագործելու համար Եսայի մարգարեի տեսիլքը՝

«Եվ իրենց սրերից խոփեր պիտի ձուլեն և իրենց սվիններից մանգաղներ. և այլևս ոչ մեկ ազգ ուրիշ ազգի վրա սուր պիտի չբարձրացնի և այլևս նրանք պիտի չսովորեն պատերազմել» (Ես. Բ 4):

Խաղաղությունը կրավորական կեցվածք չէ անշուշտ, այլ մարդկային հասարակության առողջ ուժերի ներդաշնակ գոյավիճակ, արդարության բարոյական լույսի ներքև:

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Այո՛, ով խաղաղություն փնտրի, նա կգտնի Աստծուն:

Երանի խաղաղության հերոսներին: Ամեն:





ԻՆՖՐԱՑԻԱԿԱՆ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիայի Տ. Պիմեն Պատրիարքի հրավերով սույն թվականի մայիսի 10—14 օրերին Մոսկվայում գումարվում է կրոնական գործիչների համաշխարհային համագումար, որին մասնակցում են բազմաթիվ երկրների տարբեր կրոնների շուրջ 500 պատգամավորներ:

Համագումարի բնաբանն է լինում «Կրոնական գործիչները հանուն սրբական պարգևի՝ կյանքի՝ միջուկային աղետից պահպանման»:

Համագումարը, ծանրորեն մտահոգված մեր օրերի միջազգային իրադարձությունների ընթացքով, կոչ է անում բազմապատկել ջանքերը՝ ի խնդիր սպառազինությունների մրցավազքի սանձահարման, միջուկային վենքերի արգելման և ժողովուրդների խաղաղ համագործակցության:

Համագումարը գիտակցելով ներկայումս ապրող մարդկանց և գալիք սերունդների հանդեպ բոլոր կրոնների ունեցած մեծ պատասխանատվությունը, կոչ է անում բոլոր կրոնական գործիչներին, աշխարհի բոլոր կառավարություններին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի վինաթափման նվիրված երկրորդ հատուկ նստաշրջանին՝ ամեն հնարավոր ջանքերը գործադրել փրկելու աշխարհի խաղաղությունը ու մարդկությունը միջուկային վենքի աղետից, երկրագնդի վրա հուսալի անվտանգություն ստեղծելու համար:

Այս մտածումների լույսի ներքո համագումարը առաջարկել է միջուկային վենքի փորձարկումներից հրաժարվելու պայմանագրի կնքումը, միջուկավերծ գոտիների ստեղծման հնարավորությունների մշակումը, մասսայական ոչնչացման վենքի նոր տեսակների սիստեմատիկ ստեղծման ու արտադրության դադարեցումը:

Համագումարը իր այս առաջադրանքներով և մշակած ծրագրերով հանդիսացել է հարապատ արտահայտիչը ժողովուրդների լայն վանգվածների արդար իղձերի:

Մոսկվայի համագումարի ընթացքում արտասանվել են նույն այս ոգով բազմաթիվ ելույթներ: Ժողովի մասնակիցներից շատերը իրենց ելույթներում վգում և արտահայտում են այն վտանգն ու սարսափը, որ այսօր ապրում է մարդկությունը միջուկային ռումբերի ահավոր սպառնալիքի տակ:

Մայիսի 10-ին համագումարի առաջին լիագումար նիստում Հայոց Հայրապետը ֆրանսերեն լեզվով արտասանած իր ելույթում ասում էր.

«Աստվածային պատգամն է՝ որ փշրվեն քարե սրտերը ու մարդիկ և ազգություններ նոր սիրտ ու ոգի վգեցած, իրենց կյանքի ճանապարհին՝ արդարությամբ և խաղաղությամբ գործեն, որ արդարությամբ՝ խաղաղություն լինի, որ խաղաղությամբ՝ արդարություն լինի:

Հավատում ենք, այո՛, թե հնարավոր կլինի տակավ իրականացնել ցանկալի բարեշրջումը մարդկանց գիտակցության, համաշխարհային չափերով դաստիարակչական աշխատանք ծավալելով բոլոր ազգերի ծոցում,

հիմնական նպատակ ունենալով ամեն մարդու ներշնչել նրա իրավունքը՝ խաղաղ ապրելու և պարտականությունը՝ պաշտպանելու իր նմանների խաղաղ ապրելու իրավունքը: Մարդու իրավանց գերագույնը, կարծում ենք, պետք է նկատել՝ իրավունքը խաղաղության:

Ժողովուրդների սրբական իրավունքն է, այո՛, ընտրելու խոփը կամ սուրը: Այսօր մեր աշխարհի ժողովուրդների լայն զանգվածները ընտրում են խոփը և բարձրաղաղակ մերժում են իրենց ձեռքը դնել սրի վրա:

Խաղաղությունը կրավորական կեցվածք չէ, այլ մարդկային հասարակության առողջ ուժերի ներդաշնակ գոյավիճակ, արդարության բարոյական լույսի ներքո»:

Համագումարում բազմաթիվ խոսք առնողներ ընդգծեցին միջուկային զենքերի սանձազերծման հնարավոր ահավոր վտանգը:

Ցնցիչ տպավորություն թողեց, օրինակ, Ճապոնիայի Զիննոմորո կոլեջի պրոֆեսոր Բոկկո Յու Քի Յամանի ելույթը՝ նվիրված 1945 թվականի օգոստոսի 6-ին Հերոսիմայի և Նագասակիի վրա նետված առաջին ատոմական ռումբերի գործած սարսափելի ավերածություններին: Նա ասաց.

«6 օգոստոս 1945-ին ատոմական առաջին ռումբը սպանեց 140.000 մարդ: Երեք օր անց երկրորդ ատոմական ռումբը Նագասակիում սպանեց 70.000 մարդ: Հաստատված է, որ այսօր բոլոր երկրների բոլոր տեսակի ատոմական զենքերի ուժը երեք միլիոն 800 հազար անգամ ավելի մեծ է, քան թե Հերոսիմայի ռումբը:

Համաձայն 1979-ի ԱՄՆ-ի պատերազմական նախարարության մի զեկուցագրի, հավանական ատոմական մի պատերազմ կարող կլինի սպանել Ամերիկայի Միացյալ Նահանգներում մինչև 100 միլիոն մարդ և բնաջնջել քաղաքների 80 տոկոսը»:

«Վերջերս, Անգլիայում տեղի ունեցած բժիշկների միջազգային գիտական մի հանդիպումի ժամանակ, սովետական գիտնական Լեոնիդ Իլուին հայտարարեց, որ ապագա ատոմական մի պատերազմ Եվրոպայում կարող է սպանել մինչև 100 միլիոն մարդ անմիջապես և 68 միլիոն մարդ՝ հաջորդ ամիսներին, ռադիացիայի հետևանքով, իսկ 150 միլիոն մարդիկ կդառնան ծանր վիրավորներ, ինչ որ պիտի նշանակեր՝ մոտավորապես Եվրոպայի բնակչության կեսը»:

«Նույն համագումարում Լոնդոնի համալսարանի դոկտոր Ժոզեֆ Բոթբլատը հայտարարել է, թե այդպիսի մի պատերազմի հետևանքով մթնոլորտը այնքան պիտի թունավորվի և մթագնի 1—2 օրերի ընթացքում, որ ամբողջ գյուղատնտեսական բերքը, բույսը պիտի ոչնչանան, և վերապրող մարդիկ քաղցից պիտի մահանան»:

Համագումարի վրա մասնավոր տպավորություն թողեց Ամերիկայի հանրածանոթ քարոզիչ վերապատվելի դոկտոր Գրեհամը, որ իր ելույթի մեջ ասում էր.

«Հակառակ մեր կրոնական բազմապիսի տարբերությունների, մենք միևնույն հիմնական համոզումը ունենք, որ մարդկային կյանքը սուրբ է և որ մարդկության հարցերը կարիքը ունեն հոգեկան մի պատասխանի:

... Ոչ ոք մեզանից չի կարող պատկերացնել այն աներևակայելի բնաջնջումը, որ կարող է պատճառել մի ատոմական պատերազմ»:

«Ատոմական գիտնականների» ամերիկյան ամսագրի վերջին խմբագրականում ասվում է. «Ատոմական ռումբերի գերակայության ըմբռնումը այժմ ոչ մի իմաստ չունի: Միջուկային պատերազմի դեպքում ոչ ոք չի կարող հաղթանակ ունենալ: Միջուկային պատերազմը կլինի մի ամբողջական աղետ բոլոր մասնակիցների համար: Իսկ նախագահ Բրեժնևը վերջերս հայտարարեց իրավամբ, թե «Միջուկային մի պատերազմ կարող է սանձազերծել միայն այն երկիրը, որն ուզում է անձնասպան լինել»:

«... Կամենում եմ վերջացնել իմ խոսքը մի ոգեկոչումով: Վերջին պատերազմի ընթացքում երկու մեծ ժողովուրդները Սովետական Միության և ԱՄՆ-ի, դաշնակիցներ էին և միասին կռվում էին հասարակաց թշնամու դեմ, որը նացիստական Գերմանիան էր: Այդ օրերին մեր հիմնական գաղափարախոսություններով համաձայն չէինք իրար հետ, բայց, այնուամենայնիվ, մենք միացած էինք ու դաշնակցած ճակատելու համար մեր հասարակաց թշնամու դեմ, մի թշնամի, որն այնքան զորեղ էր, որի առջև անէանում էին մեր տարբերությունները:

Ես հայտարարում եմ, որ այսօր մենք բոլորս, և ոչ միայն մեծ պետությունները ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի, այլ երկրագնդի բոլոր ազգությունները գտնվում են միևնույն հասարակաց թշնամու առջև ճակատ առ ճակատ: Այսօր մեր այդ թշնամին միջուկային բնաջնջումի սպառնալիքն է:

Արդյոք մենք չե՞նք կարող հուսալ և աղոթել, միանալու և ստեղծելու համար մի հզոր դաշնակցություն այս թշնամու դեմ, որ սպառնում է մեզ բոլորիս բնաջնջել»:

Կարիք չկա շարունակել կրոնական գործիչների համագումարում կարդացված ելույթները, որոնք խոր տագնապով նշում են այսօր մարդկության գլխին կախված վտանգը, որը սպառնում է աշխարհը մղել դեպի միջուկային, բիոլոգիական և քիմիական աղետի անդունդը:

Մոսկվայում գումարված կրոնական գործիչների համաշխարհային համագումարում մի անգամ ևս դրսևորվում է աշխարհի կրոնների հոգևոր պետերի և բարի կամքի տեր հավատացյալ միլիոնավոր մարդկանց կամքն ու վճռականությունը՝ տեսնելու կյանքը ապատ, առանց բռնությունների ու շահագործումների և վերծ՝ միջուկային վենքի կործանարար վտանգից:

Կրոնական գործիչների համաշխարհային համագումարի կոչերը բացառիկ ջերմությամբ խոսում են նաև հայ ժողովրդի սրտին ու խղճին: Անցյալում բազում անգամներ նահատակված հայ ժողովուրդը պատմության դառն փորձով իր մարմնի վրա է զգացել պատերազմների մահացու հարվածները: Մենք հայերս ինչպե՞ս կարող ենք մոռանալ առաջին համաշխարհային սպանդը, որ մեր ազգի կեսը գերեզման իջեցրեց 1915-ի սև օրերին: Միայն վերջին վաթսուն և ավելի տարիներին է, որ հայ ժողովուրդը, հայրենի վերածնված պետության հովանու ներքո և նրա ստեղծած խաղաղ ու ապահով պայմաններում, գտավ իր ազգային գոյատևման ճանապարհը, վերաշինեց դարերով ավերված իր երկիրը և նոր լույսերով ծաղկեցրեց իր ազգային մշակույթը:

Հայոց Հայրապետի այս տարվա Սուրբ Ծննդյան տոնին Մայր տաճարում խոսած Իր քարոզում վկայում էր մեր օրերին հայ ժողովրդի կյանքում խաղաղության կարևորության մասին.

«Ցեղասպանություն տեսած հայ ժողովուրդը, առավել վճռականությամբ իր ձայնը, իր աղերսը միացնում է խաղաղության ուժերին, որովհետև պայծառ գիտակցությունը ունի, թե միայն աշխարհի խաղաղության պահպանման պայմաններում նա պիտի կարողանա գոյատևել իբրև ազգություն, իբրև հայրենի պետություն և իբրև Եկեղեցի: Հայոց վերածնված մայր երկրի ժողովրդի բախտն ու ճակատագիրը պայմանավորված են խաղաղության պահպանմամբ, խաղաղության ուժերի հաղթանակով: Որևէ հայ մարդու համար, այլ կերպ մտածում կամ գործունեություն կարելի չէ ըմբռնել»:



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 10—14-ը Մոսկվայում տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության կրոնականների համաշխարհային համագումարը, որին մասնակցելու համար Մոսկվա մեկնեց Հայոց Հայրապետը՝ ի գլուխ եկեղեցական մի պատվիրակության, որի կազմում էին Շիրակի հայոց թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Հունաստանի հայոց հայրապետական պատվիրակ և Դամասկոսի հայոց առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալբակյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը և Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը՝ որպես հյուր:

Մայիսի 8-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Նորին Սուրբ Օծությունը ինքնաթիռով ժամանում է Մոսկվա: Վնուկովոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարիգալստյան խոսք է ասում, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի անունից, Կրուտիցկու և Կոլոմենսկի Յուվենալի միտրոպոլիտը՝ իր շքախմբով:

Հանուն ՍՍՀՄ կառավարության Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք է ասում նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների լիակոր տիար Է. Գալստյանը:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Ռուս Եկեղեցու Պատրիարքարանի հրատարակչական բաժնի վարիչ, Վոլոկոլամսկի արքեպիսկոպոս Պիտիրիմի հրավերին, Իր շքախմբով այցելում է Մոսկվայում վերջերս կառուցված Պատրիարքարանի հրատարակչական բաժնի երեք հարկանի հաստատություն ու դիմավորվում Պիտիրիմ արքեպիսկոպոսի և հրատարակչական բաժնի շուրջ 140 աշխատակիցների կողմից:

Ողջունելով Հայոց Հայրապետի գալուստը իր ղեկավարած հաստատությունից ներս, Պիտիրիմ արքեպիսկոպոսը նախ և առաջ ներկա աշխատակիցներին խոսում է այն մեծ ակնածանքի և սիրո մասին, որ տածում է Ռուս Եկեղեցին և հոգևորականությունը Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի նկատմամբ, ապա պատմում գրական այն կապերի մասին, որ տասնյակ տարիներ գոյություն են ունեցել «Էջմիածին» և «Մոսկայի Պատրիարքարանի ամսագիր» հրատարակչությունների միջև:

Այնուհետև Պիտիրիմ արքեպիսկոպոսը խնդրում է Հայոց Հայրապետին բավմելու պատվավոր գահին և օրհնելու իր աշխատակիցներին:

Այս առթիվ Հայոց Հայրապետը Իր գնահատանքի խոսքն է ասում Պիտիրիմ արքեպիսկոպոսին՝ նրա հրատարակչական ու շինարարական գործունեության համար, և

մաղթում նորանոր հաջողություններ այդ հաստատությանը:

Այնուհետև Պիտիրիմ արքեպիսկոպոսը Նորին Սրբությանը և Նրա շքախմբի անդամներին ծանոթացնում է նորակառույց շենքի հրատարակչական բաժնին ու նրանում կատարվող աշխատանքներին:

Վերջում Հայոց Հայրապետը և Պիտիրիմ արքեպիսկոպոսը հուշանվերներ են փոխանակում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը պատվավոր այցելուների մատյանում Իր գնահատանքի և օրհնության խոսքն է արձանագրում և հրաժեշտ է առնում այս սքանչելի հրատարակչական հաստատությունից մեծ տպավորությամբ:

Մայիսի 9-ին, կիրակի: Կանաչ կիրակի: Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Ս. պատարագին ներկա էր նաև ազգիս Վեհափառ Հայրապետը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը մուտք է գործում եկեղեցի, որտեղ ջերմորեն դիմավորվում է ս. պատարագին ներկա ավելի քան 2000 հայերի կողմից:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Հայոց Հայրապետը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց... մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց» բնաբանով: Նորին Սուրբ Օծությունը նախ խոսում է Քրիստոսի Հարության պատմական դեպքի հոգևոր նշանակության մասին, ապա Հարության տոնի գաղափարը կապում մեր հայ ժողովրդի պատմության ու կյանքի հետ՝ կենդ առնելով մանավանդ վերջին 60 տարիների ընթացքում հայրենիքում հայ ժողովրդի ձեռք բերած պատմական նվաճումների վրա, տարբեր ասպարեզներում:

Վեհափառ Հայրապետը այնուհետև պատմում է Մոսկվայում հաջորդ օրը, մայիսի 10-ին, տեղի ունենալիք կրոնական գործիչների՝ խաղաղությանը նվիրված համաշխարհային համագումարի մասին՝ շեշտելով դրա կարևորությունը այսօր ամբողջ աշխարհի և ի մասնավորի հայ ժողովրդի համար:

Հավարտ ս. պատարագի, Նորին Սրբության նախագահության ներքո, հայոց եկեղեցուն կից գերեզմանատանը տեղի է ունենում հոգեհանգստի արարողություն՝ ի խաղաղություն նորոգ հանգուցյալ հայ նշանավոր գրող Մարիետա Շահինյանի հոգու:

Այստեղ, շրջապատված բազմահազար հայ հավատացյալներով, Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը մի սրտառուչ դամբանական է խոսում մեծատաղանդ հանգուցյալի հիշատակին:

Մայիսի 15-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, մասնակցելուց հետո Մոսկայում կրոնական գործիչների համաշխարհային համագումարին, վերադառնում է Մայր Աթոռ:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի միաբանությունը, Արարատյան թեմի քահանայից դասը, եկեղեցական վարչությունների անդամները և բազում հավատացյալներ:

Այստեղ Հայոց Հայրապետին բարի գալուստ են մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ ԻՐ ՃԱՌԸ ԱՐՏԱՍԱՆԵԼԻՍ. ՁԱԽԻՑ ԱՋ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ ՊԱՏՐԻԱՐՔԸ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔԱՐՈԶԻՉ ԲԻԼԼԻ ԳՐԵՀԵՄԸ, ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԺՈՒՍՏԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ, ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՄՈՒՖԹԻ ԲԱԲԱԽԱՆՈՎԸ, ԿԱԹՈՂԻԿ ԿԱՆՈՆԻԿՈՍ ՀԱՅՐ ԳՈՌԸ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԸ



ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մայիսի 10-ին, երկուշաբթի օրը, Մոսկվայի և Համայն Ռուսիայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի հրավերով, արտասահմանի հետ առևտրական կապերի դահլիճում, հանդիսավոր իրադրության մեջ, տեղի է ունենում «Կրոնական գործիչները հանուն սրբական պարգևի՝ կյանքի՝ միջուկային աղետից պահպանման» թեմայով համաշխարհային համագումարի բացումը:

Համագումարին ներկա են լինում 90 երկրների շուրջ 600 քրիստոնեական, մահմեդական, հրեական, բուդդայական, հինդուական, սինդոյական և այլ կրոնների հոգևոր պետեր, բարձրաստիճան ներկայացուցիչներ, հյուրեր, դիտորդներ, թղթակիցներ:

Համագումարին մասնակցում էր նաև Հայոց Հայրապետը՝ ի գլուխ Հայ Եկեղեցու պատվիրակության:

Հայոց Հայրապետը տեղ էր գրավել համագումարի պատվավոր նախագահության մեջ:

Ժողովը բաց է անում Մինսկի և Բելոռուսիայի Ֆիլարետ միտրոպոլիտը՝ Ռուս Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի վարիչը:

Ողջունելով բոլոր ներկաներին, նա հույս է հայտնում, որ ներկա կոնֆերանսը հնարավոր ամեն բան կանի, որպեսզի «Երկրի վրա բնակվող միլիոնավոր հավատացյալները հույսով նայեն ապագային և անվախ կերպով շարունակեն հողագնդի վրա իրենց շինարարական գործունեությունը՝ արդար և համընդհանուր խաղաղության վրա հիմնելով այն»:

Իր բացման ելույթից հետո Ֆիլարետ միտրոպոլիտը խոսքը տալիս է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ տիար Վ. Ա. Կուրոյեդովին, որը ընթերցում է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ ընկ. Ն. Ա. Տիխոնովի՝ կոնֆերանսի մասնակիցներին ուղղած հետևյալ ողջույն-հեռագիրը.

«Սովետական կառավարության և անձամբ իմ անունից ողջունում եմ համաշխարհային կոնֆերանսի մասնակիցներին: Ձեր կոնֆերանսը, որ նվիրված է ժամանակի ամենահրատապ խնդիրներից մեկին, գումարվում է անհանգիստ ժամանակներում:

Սառը պատերազմի երկրպագուները ամեն կերպ սաստկացնում են պատերազմի հիստերիան, արագացնում՝ սպառազինությունների մրցավազքը, բացեիբաց խոսում՝ սահմանափակ պատերազմի մասին... Սովետական կառավարությունը մեծ գնահատանքով է ողջունում համագումարի մասնակիցների խաղաղության ակնիվ գործի հաղթանակի համար տարվող ջանքերը»:

Սովետական կառավարության ողջույնի գրի ընթերցումից հետո Ֆիլարետ միտրոպոլիտը խնդրում է Վ. Ա. Կուրոյեդովին ժողովի մասնակիցների կողմից հայտնել խորին երախտագիտություն սովետական կառավարությանը՝ կրոնական գործիչների համաշխարհային համագումարին տրված բարձր գնահատականի համար:

Այնուհետև բոլոր ներկաների կողմից կատարվում է մեկ րոպե լուռ աղոթք՝ կոնֆերանսի աշխատանքների հաջողության համար: Ապա խոսք է առնում Մոսկվայի և Համայն Ռուսիայի Տ. Պիմեն Պատրիարքը:

Նորին Սրբությունը ողջունում է համագումարի բոլոր մասնակիցներին և շեշտում, որ այսօր, միջուկային աղետի այս նախաշեմին, բոլոր գիտակից հավատացյալների պարտքն

է՝ մոռանալ իրենց տարակարծությունները և դեմ կանգնել համընդհանուր ուժերով՝ չարիքին: «Կյանքը սրբական պարգև է Աստուծու», ասում է Նորին Սրբությունը և իր մտածումը հաստատում Ս. Գրքից մեջբերված օրինակներով: «Ուստի մեր պարտքը այդ կյանքը պահպանելու մեջ է: Օգտվենք մեր հանդիպումից, որպեսզի միասնական կերպով քննենք այն արգելքները, որ այսօր կանգնած են մեր ճանապարհի վրա, և գտնենք այն միջոցները, որ կնպաստեն դրանց վերացմանը:

Օգտվենք մեր հանդիպումից և հայտարարենք ամբողջ աշխարհին, որ հոգևոր հովիվները և կրոնական գործիչները աշխարհում խաղաղության և երկրի վրա մարդկանց բարեկեցության համար տարվող պայքարում միակամ են: Թող Աստված օգնի մարդկանց դուրս վանելու չարիքը իրենց սրտերից: Թող նա խաղաղություն պարգևի ամբողջ աշխարհին. ամեն»:

Ընդմիջումից հետո սկսվում է համագումարի Բ լիագումար նիստը, որտեղ ներկաները ունկնդրում են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարի, Ֆինլանդիայի և Մոնղոլիայի հանրապետությունների վարչապետների, Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռանսիի, Հռոմի Հովհաննես Պողոս Զ Սրբազան Պապի, ինչպես նաև կոնֆերանսի հյուրեր Խաղաղության պահպանման սովետական կոմիտեի նախագահ Յ. Ա. Ժուկովի և Խաղաղության համաշխարհային կոմիտեի ղեկավար Ռոմեշ Չանդրայի ողջույնի խոսքերը:

Համագումարի լիագումար նիստում առաջինը ֆրանսերեն ճառով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը (Նորին Սրբության ողջույնի բովանդակալից խոսքը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Երեկոյան ժամը 17-ին համագումարը ընկըսում է իր ընտրական աշխատանքները: Ընտրվում են կոնֆերանսի նախագահ, փոխնախագահներ, մանդատային և խմբագրական կոմիտեներ, աշխատանքային չորս խմբերի ղեկավարներ:

Մայիսի 11-ի առավոտյան սկսվում է քննարկումը «Համաշխարհային կրոնների խաղաղասիրական գործունեության աստվածաբանական և հոգևոր մարվերը և միջուկային աղետը կանխելու համար կրոնական գործիչների ունեցած խնդիրները» թեմայի: Այս առթիվ ելույթ ունեցողները (Սումանատիս Թիերո՝ Շրի Լանկա, պրոֆ. Սաչիդանդա՝ Հնդկաստան, Ռենե Լորենտեն՝ Կաթոլիկ Եկեղեցի, Բիլլի Գրեհեմ՝ ԱՄՆ և այլն) տարբեր գործարար ճանապարհներ են նշում խաղաղության պահպանման համար և միահամուռ կերպով շեշտում, որ իրենց միակ թշնամին այժմ պատերազմն է:

Ընդմիջումից հետո համագումարը շարունակում է իր աշխատանքները: Լիագումար Դ նիստի թեման էր՝ «Սպառազինությունների մրցավազքի և միջուկային պատերազմի աղետային հետևանքները» (զեկուցողներ՝ դոկտ. Հարի Բրաուեր՝ ԱՄՆ, դոկտ. Կարոլի Թոթ՝ Հունգարիա, Քրիստոնեական Համաշխարհային Կոնֆերանսի նախագահ, ակադեմիկոս Ա. Ա. Բաևը՝ ՍՍՀՄ, Բոկկո Ցուդիյաման՝ Ճապոնիա, դոկտ. Ռաչինդեր Կաուրը՝ Հնդկաստան):

Ե նիստում քննության է առնվում «Միջուկային պատերազմի նոր ուսմունքները» թեման (զեկուցողներ՝ Մ. Ն. Վան-Մեյեվալդ՝ Նիդեռլանդներ, պրոֆ., դոկտ. Լուիս Ռիվերա՝ Պուերտո-Ռիկո, շեյխ Յուսուֆան Շաքիրով՝ ՍՍՀՄ, տիկին Մատիյո Կուրոկավա՝ Ճապոնիա):

Զ նիստը նվիրվել էր «Միջուկային զինաթափման խնդիրների հրատապությունը» թեմային (զեկուցողներ՝ Կուշոկ Բակուլա՝ Հնդկաստան, ակադեմիկոս Գ. Արբատով՝ ՍՍՀՄ):

Մայիսի 12-ի առավոտյան նիստում խրմբագրվում են երկու ուղերձներ՝ առաջինը ուղղված ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովին և երկրորդը՝ Պատրիարք Պիմենին:

Երկու ուղերձներում էլ ժողովի մասնակիցները հայտնում են իրենց պատրաստակամությունը և հաստատ մտադրությունը՝ պայքարելու և մինչև հաղթական ավարտին հասցնելու խաղաղության արդար և սրբազան գործը: Ապա տեղի է ունենում լիագումար Է նիստը՝ «Աշխատանքի արագընթաց շարունակումը մեր հանապազօրյա խնդիրն է» թեմայով (զեկուցողներ՝ դոկտ. Նայնամ Կոշի, դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկի՝ Քրիստոնեական Համաշխարհային Կոնֆերանսի քարտուղար, պրոֆ. Չիմիդիան Ժույդեր՝ Ասիայի Բուդդայական Կոնֆերանսի քարտուղար, դոկտ. Մաքսիմ Ռաֆրանսուա՝ Աֆրիկայի Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար, դոկտ. Գլեն Վիլյամս՝ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախագահ, դոկտ. Կարլ Մաու՝ Համաշխարհային Լութերական Եկեղեցու գլխավոր քարտուղար, տիկ. Զոաննա Կատիվադա՝ ԱՄՆ, Կրուտիցկու և Կոլոմենսկու միտրոպոլիտ Յուվենալի՝ ՍՍՀՄ):

Նույն օրը, կեսօրին, համագումարի աշխատանքները շարունակվեցին 4 աշխատանքային խմբերում, որոնց մասնակիցները ուսումնասիրեցին օրակարգի մնացած

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԱՆԾԱՆՈԹ ԶԻՆՎՈՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԴՆԵԼԻՍ

այլ հարցերը՝ լիագումար նիստին բերելու համար իրենց քննության արդյունքներն ու առաջարկները, գրավոր վկայություններով:

Մայիսի 12-ի երեկոյան Մոսկվայի նորակառույց «Օլիմպիական» համերգադահլիճում ժողովականների համար տրվեց համերգ՝ մասնակցությամբ ՍՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախմբի և Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարանի քառաձայն երգչախմբի:

Մայիսի 13-ին, ժամը 15-ին, սկսվում է Ը լիագումար նիստը, որտեղ ունկնդրվում են աշխատանքային խմբերի կազմած տեղեկագրերը:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի կողմից, ի պատիվ ժողովի մասնակիցների, «Սովետսկայա» հյուրանոցում տրվում է ընդունելություն, որին ներկա է գտնվում նաև Վեհափառ Հայրապետը՝ Իր շքախմբի անդամների հետ:

Մայիսի 14-ին, ուրբաթ, համագումարի վերջին օրը, առավոտյան, տեղի են ունենում ևս երկու լիագումար նիստեր՝ քննարկելու համար եպրափակիչ փաստաթղթերի նյութերը: Որոշվում է կազմել 4 փաստաթուղթ՝

ա. Համագումարի հաղորդագրություն խաղաղության մասին:

բ. Կոչ՝ ուղղված աշխարհի բոլոր կրոնների ղեկավարներին և հետևորդներին:

գ. Կոչ՝ ուղղված աշխարհի բոլոր պետությունների ղեկավարներին:

դ. Կոչ՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի վինաթափմանը նվիրված Բ հատուկ նստաշրջանին:

Ընդունված երեք կարևոր կոչերից առաջինը հասցեագրված էր աշխարհի բոլոր կրոնների ղեկավարներին և հավատացյալներին:

Այդ կոչում ասվում էր.

«Սիրելի եղբայրներ և քույրեր.

Պատմական վճռական այս պահին մենք դիմում ենք ձեզ սույն կոչով. նախանշանն է չարի: Միջուկային հրդեհի աղետը, որ ընդունակ է կործանելու մարդկությունը և կյանքը, այսօր առավել քան երբևէ՝ սպառնում է մեզ:

Մենք՝ բուդդայական, ղրադաշտական, հինդուիզմի, մահմեդական, սիքկիզմի և քրիստոնեական կրոնների ներկայացուցիչներ, ժամանած բոլոր 6 մայրցամաքների 90 երկրներից, հավաքվեցինք Մոսկվայում՝ 1982 թվականի մայիսի 10—14 օրերին մասնակցելու «Կրոնական գործիչները հանուն սրբազան պարգևի՝ կյանքի՝ միջուկային աղետից փրկելուն» համաշխարհային կոնֆերանսին:

Մենք դիմում ենք ձեզ՝ աշխարհի բոլոր երկրներում ապրող բոլոր կրոնների ներկայացուցիչ թանկագին եղբայրներին և քույրերին, որ մենք մեծամասնություն ենք աշխարհում: Ընդունելով մեզ վրա համատեղ գործելու բարոյական պարտավորությունը, մենք կոչ ենք ուղղում մարդկության խղճին և բոլոր նրանց, ովքեր պետական որոշումներ են ընդունում, որ մենք կարող ենք փոխել պատմության ընթացքը՝ ելնելով մարդկության հանդեպ մեր սիրուց:

Մենք կրոնական տարբեր համոզմունքներ ունենք: Այսօր, սակայն, մենք հանդես ենք գալիս միասին, քանի որ միջուկային աղետը հավասարապես սպառնում է մեզ բոլորիս, անկախ այն բանից՝ հետևորդ ենք արդյոք մի կրոնի, թե՝ ոչ: Մենք չենք հավաքվել այստեղ՝ քննելու համար մեր տարբերությունները, և ոչ էլ նրա համար, որ ստեղծենք մի նոր ընդհանուր չտարբերակվող կրոն: Հավաքվել ենք այստեղ, որովհետև զգում ենք համայն մարդկության և ողջ կյանքի դեմ ընդհանուր մի սպառնալիք: Այս ընդհանուր կոչով, տարբեր կրոնների պատկանող սիրելի եղբայրներ և քույրեր, մենք դիմում ենք ձեզ և հանուն ձեզ՝ մարդկության խղճին:

Մենք ներկայացնում ենք բազմապիսի մշակույթներ, գաղափարախոսություններ և քաղաքական սիստեմներ: Սակայն մենք այսօր հավաքվել ենք որպես կրոնական մարդիկ՝ սրբազան պարգևը՝ կյանքը՝ միջուկային աղետից փրկելու պայքարով:

Խաղաղությունը կյանքի անհրաժեշտ որակն է: Պատերազմը հակասում է կյանքին: Սերը, կարեկցանքը, հոգատարությունը մյուսների նկատմամբ խաղաղություն է բերում մեզ, և դրանով կյանքը արժեվորվում է: Պետք է ձգտել միայն ճշմարտության և ապրել այդ ճշմարտությամբ: Կեղծիքը չարիք է և այն պետք է հեռացվի: Ատելությունը, նվաճողականությունն ու ագահությունը տանում են դեպի պատերազմ ու կործանում են կյանքը: Անհրաժեշտ է պայքարել անարդարության և հարկադիր չքավորության դեմ ու վերացնել դրանք:

Որպես կրոնական մարդիկ պատերազմը և բռնությունը արդարացնելու համար առաջնորդում մենք ունեինք հակասական տեսակետներ: Այսօրվա աշխարհում մի նոր երևույթ է նկատվում, այն, որ պատմության մեջ առաջին անգամը լինելով՝ միջուկային աղետը սպառնում է ողջ կյանքին, իսկ միջուկային պատերազմը կարող է ավարտվել միայն համընդհանուր աղետով: Այդ պատճառով մեր կրոնները համամիտ են այս պարզ հարցում, որ միջուկային պատերազմը ոչ մի պայմաննե-

ռում չի կարող ունենալ իր արդարացումը և այն մարդկության համար այսօր ներկայացնում է ամենամեծ վտանգը:

Այս համագումարի ժամանակ մենք շատ ելույթներ լսեցինք: Մենք մեր վրա զգացինք այն վտանգը ու վախը, որ զգում են Անգոլայում, Զամբիայում, Իրաքում և Լիբանանում ապրող մարդիկ, քանի որ նրանց հզոր հարևանները չեն հրաժարվում այդ երկրների սահմանները խախտելուց, նրանց անպաշտպան բնակչությունը գնդակոծելու մտքից: Մենք սարսուռ զգացինք այն մտքից, թե ինչքան կավելանա այդ վտանգը, եթե այդ տիրությունների միջուկային պոտենցիալ ուժերը, պետություններ, որ չեն հարգում միջազգային օրենքը, դառնան իրական:

Մերձավոր Արևելքից եկած մեր եղբայրները պատմեցին մեզ այն մասին, որ Մերձավոր Արևելքը այժմ նմանվում է մի եռացող կաթսայի: Լիբանանը արյունաքամ է լինում, նրա միասնությունն ու անկախությունը վտանգի տակ են, որոշ խմբակցություններ դրսից զենքեր են ստանում: Պաղեստինի ժողովուրդը անտուն մնալով՝ դեռևս թափառումների մեջ է:

Մենք լսեցինք Եվրոպայի մեր եղբայրներին և քույրերին: Ժամանակակից քաղաքակրթության օրրանը, որ դարձել է երկու պատերազմների թատերաբեմ, այսօր լի է միջուկային զենքով: Այժմ ձգտում են այն բանին, որ այն ավելի շատանա: Փոքրիկ մի կայծ Եվրոպայում՝ առաջացած բորբոքվող կրքերից, թեկուզ պատահականորեն, կարող է առաջացնել մի այնպիսի բոց, որը կվերածվի համընդհանուր հրդեհի: Ուստի զարմանալի չէ, որ Եվրոպայի ժողովուրդները իրենց բողոքն են հայտնում աննախընթաց չափերի հասնող ցույցերով:

Մենք ունկնդրեցինք Կենտրոնական և Հարավային Ամերիկայից, Աֆրիկայից, Ասիայից և աշխարհի տարբեր մասերից եկած մեր եղբայրներին և քույրերին, որոնք միաձայն կերպով պահանջում են՝ արգելեցե՛ք միջուկային զենքը, հաստատե՛ք արդարությունը, սկսե՛ք բանակցությունները, մի՛ խառնվեք միմյանց ներքին գործերին, հրաժարվե՛ք պատերազմից և ձգտե՛ք խաղաղության:

Կյանքը փրկելու համար պետք չէ բաժանվել արդարությունից, հաստատուն կարող է լինել միայն արդար խաղաղությունը: Խաղաղությունն ու արդարությունը պետք է դառնան ընդհանուրի՝ հարուստի և աղքատի, զարգացածի և թույլ զարգացածի հոգսի առարկան: Մենք պետք չէ անգործության մատնվենք այսպիսի մի դրության ժամանակ, երբ շատ-շատերը հասարակական և տնտեսական պատճառների որոշ ճնշման տակ կորցնում են հավատքը իրենց կյանքի կարևորության նկատմամբ և դառնում են անտարբեր դեպի մահը:

Որպեսզի կյանքը փրկվի, գիտությունը և տեխնիկան, մարդկության ձեռքերում եղող ամենահզոր այդ միջոցները պետք է ձերբազատվեն պատերազմին և շահույթներին ենթարկվելու իրենց այսօրվա վիճակից, ծառայեն համայն մարդկության իրական շահերին, այն է՝ հիվանդությունների և կրթության, սովի և թերասնման, աղքատության և տառապանքների վերացմանը:

Որպեսզի կյանքը փրկվի, մարդկությունը պետք է միանա բոլոր կրոնների հավատացյալների և անկրոնների հետ, որպեսզի միատեղ գործունեությամբ ճնշում գործադրվի բոլոր նրանց վրա, ովքեր ղեկավարում են տերություններ և որոշումներ կայացնում:

Ոչնչացնել ներկայումս առկա միջուկային զենքերի մեծ մասը, որով ցույց կտանք մեր համաձայնությունը վինաթափման որոշման հետ ու մարդկությանը նոր հույս կներշնչենք: Սա կարող է ի կատար ածվել բոլոր միջուկային զենք ունեցող տերությունների կողմից՝ միակամ, երկկողմանի կամ համակողմանի համաձայնությունների շնորհիվ՝ ելնելով բոլորի համար անվտանգությունն ապահովելու սկզբունքից:

Կյանքը փրկելու համար կրոնական կազմակերպություններն ու ողջ աշխարհի գործիչները պետք է հանդես գան միասնական կերպով՝ մերկացնելու համար ներկայումս տիրապետող այն կեղծ ուսմունքները, որոնք մարդկանց նետում են վտանգավոր թյուրիմացությունների մեջ:

Բայց ամենից առաջ աշխարհի բոլոր կրոնները պարտավոր են միաձայն կերպով, որպես բարոյական մի չարիք, դատապարտել բոլոր տեսակի միջուկային զենքերի փորձարկումն ու գործածումը: Սա քաղաքական հարց չէ, այլ ամենից առաջ՝ բարոյական հարց: Կրոնները պետք է խոսեն հատուկ ձայնով՝ հաշիվ տալով իրենց այն բանում, որ անցյալում իրենք եղել են պատերազմների և բռնությունների մասնակիցներ: Պետք է խոսել պարզ, բարձր և ոչ երկիմաստ, քանի որ խոսքը վերաբերում է սրբազան պարգևի՝ կյանքի պահպանմանը:

Եվ այսպես, մենք կոչ ենք ուղղում ձեզ, մեր եղբայրներ և քույրեր, ըստ հավատքի, որ ի սփյուռս աշխարհի, սկսելու, եթե դեռ չեք սկսել, խոսելու ու գործելու և ամենից առաջ՝ աղոթելու, աղոթելու ջերմապես, հույսով և հավատքով:

Թող մեր աղոթքները զորավիգ լինեն երկրի վրա եղող միլիոնների համար և թող փըր-

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

կեն հողը իր վրա կախված միջուկային աղետից: Բոլոր գոյությունների և ողջ կյանքի Աղբյուրն ու Ստեղծողը չի կարող չլսել մեր աղոթքները»:

Հավարտ համագումարի տեղի է ունենում լուռ աղոթքի արարողություն:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Տ. Պիմեն Պատրիարքի կողմից Մոսկվայի «Նովոարբատսկայա» ճաշարանում տրվում է հրաժեշտի ճաշկերույթ՝ ի պատիվ կոնֆերանսի մասնակիցների, հյուրերի և լրագրողների:

Ճաշկերույթի ընթացքում Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը իր հրաժեշտի խոսքում շնորհակալություն է հայտնում կոնֆերանսի բոլոր մասնակիցներին՝ նրանց կատարած մեծ և աստվածահաճո աշխատանքի համար:

Կոնֆերանսի ղեկավար Ֆիլարետ միտրոպոլիտը կոնֆերանսի ղեկավարության և իր կողմից նույնպես շնորհակալական խոսք է ուղղում Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին՝ նրա կողմից ցույց տրված հյուրասիրության և ջերմ ընդունելության համար:

Հանուն համագումարի բոլոր մասնակիցների հրաժեշտի հետևյալ խոսքով հանդես է գալիս Հայոց Հայրապետը.

«Սիրեցյալ եղբայրներ Մեր,

Այս հանդիսավոր պահին կխորհիմ, թե մեր բոլորիս պարտականությունն է, մեր ջերմագին շնորհակալությունները ներկայացնել Նորին Սրբություն Համայն Ռուսիոց Պատրիարքին, որը ներշնչված Ս. Հոգով նախաձեռնեց և Իր գործակիցների հետ միասին սքանչելի կերպով կազմակերպեց սույն պատմական համաշխարհային համագումարը հանուն Աստուծո ամենասուրբ պարգևին՝ մարդկային կյանքի:

Մեզ, բոլորիս համար, կրոնական հավատքով մարդիկ, հոգեկան մեծ մխիթարություն է, որ առիթը և հնարավորությունը ունեցանք մասնակցելու այս համագումարին, աղոթելու միատեղ Խաղաղության համար և ամեն մեկս բերելու մեր նպաստը համագումարի հաջողության համար:

Սիրեցյալ եղբայրներ, լինենք համոզված, որ Աստված մեզ պիտի օգնի, որ խաղաղության ուժերը պիտի հաղթանակեն, որովհետև ամենահզոր զենքը խաղաղության զենքն է, որովհետև խաղաղության զենքը մեր Աստուծո զենքն է, մեր ամենակալ, մեր փրկիչ Աստուծո զենքը:

Ընդդիմանալ պատերազմին, դա նշանակում է հպատակվել կամքին Աստուծո:

Երկրի վրա թող լինի կամքը մեր երկնավոր Հոր, ամեն»:

Մայիսի 10—14 օրերին Մոսկվայում գումարված կրոնական գործիչների համաշխարհային համագումարը ավարտում է իր օգտակար աշխատանքները:

Այդ կոնֆերանսի գումարման առիթով մի անգամ ևս դրսևորվում է աշխարհի բոլոր կրոնների ղեկավարների և հավատացյալ մարդկանց բարի կամքը՝ տեսնելու կյանքն ապատ, առանց բռնությունների և, որ ամենից կարևորն է, ջերմ միջուկային զենքի կործանարար վտանգից:

«Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

ԲՈԼՈՐ ՄԱՅՐԵՐԸ ԿՈՅՍ ԵՆ*

Ո՞ր հայրը, ի տես նորածին իր երեխային չի բացականչեր՝ հրաշք, և պահ մը իր կնոջ մէջ չի տեսներ պատկերը սուրբ Կոյս Մարիամին:

Այո, բոլոր ծնունդները հրաշքներ են, բոլոր մայրերը կոյսեր են:

Կինը, մայրութեամբ վեր կը բարձրանայ մարմնականի պայմանէն ու կը պսակուի ծննդեան հրաշքի լոյսով: Կը զգայ իր էութեան մէջ սարսուռը արարչագործութեան ու ծունկի եկած իր ծնած երեխայի առջև, կը տեսնէ անոր մէջ պտուղը Աստուծոյ շնորհաբաշխ ուժին և տեսիլքը կ'ունենայ նմանուելու կՅիսուս ծնող սուրբ կոյսին:

Ահա հոգեկան հիմնական ճշմարտութիւն մը մայրութեան մասին, որ իբրև հիմք պէտք է ծառայէ, կը խորհինք, մեր բոլոր դատումներուն՝ ընտանիքի և ընտանեկան կեանքի վերաբերեալ:

Գիտութիւնը, իր բոլոր յայտնաբերումներով ու հաստատումներով կը մնայ դերին մէջ՝ ծննդեան հրաշքին մարմնական մեքենականութիւնը և գոյառման պայմանները հետազոտողի ու բացատրողի: Սակայն հրաշքը կը մնայ հրաշք, անիմանալի խորհուրդ: Աւելին, գիտութեան լոյսի ներքև, հրաշքը կը դառնայ առաւել հրաշալի:

Հրաշալիքը ծնունդի և սրբութիւնը մայրութեան, ահա հիմքը ընտանիքին: Չի ընտանիքն է խորանը այդ հրաշքին և աղբիւրը մայրական սրբութեան:

---

* Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը՝ անգլերեն թարգմանությամբ տպված Միացյալ Նահանգներում հրատարակվող հանրահայտ «LEADERS» («Առաջնորդներ») հանդեսի 1980 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համարում: -

All Mothers Are Virgins

By His Holiness Vasken I,
Supreme Patriarch and Catholicos
of All Armenians, Etchmiadzin, Armenia

Is there a father who, upon glimpsing his new-born child for the first time, does not exclaim: "A miracle"? And is there a father who, in that instant, does not see in his wife the image of Mary, the Holy Virgin? In this sense, all births are miracles; all mothers virgins.

In motherhood, a woman transcends her physical being and is crowned with the light of the miracle of birth. She feels deep within her the blessed shudder of creation and, kneeling before the infant she bore, sees in the child the gracious work of God's great power, and envisions herself the Holy Virgin.

This is the fundamental, spiritual truth about motherhood, which, we feel, must serve as the basis of all judgments on family and family life.

With all its discoveries, with all the knowledge it has developed, science remains limited to the role of examining and understanding the physical aspects and circumstances of procreation. Yet the miracle remains a miracle, an unfathomable mystery, and in the light of science, even more miraculous.

The miracle of birth and the sanctity of motherhood are the foundations of the family; the family is the altar of that miracle and the fountain of that sanctity. The Christian conception of the family is embedded in such natural, human sentiments. Thus did Jesus proclaim the familial union between man and woman a Divine Act, commanding: "What therefore God has joined together, let no man put asunder" (Mark 10:9).

This religious conception of the family is confirmed as well by the studies and researches of the social sciences, demonstrating that the family is the foundation of human society, of nations and their survival, of all history.

In light of these religious and scientific truths, it becomes increasingly essential in our day to defend and strengthen the institution of the family, which religion regards as the sacred gift of God, which the social sciences accept as the foundation and guarantor of individual and collective life, of physical and spiritual health and moral harmony.

We exhort clergymen, educators, legislators, men of the arts and sciences, in all countries, to work together to restore the sanctity of the family.

Բնական, մարդկային հիմնական այս զգացումներու վրայ խարսխուած է ընտանիքի մասին քրիստոնէական ըմբռնումը: Այդպէս է որ Յիսուս, ամուր հաստատելու համար ընտանեկան միութիւնը տղամարդու և կնոջ, աստուածային արարչագործութիւն կը հռչակէ վայն և կը պատգամէ՝ «զոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեսցէ»:

Կրօնական այս ըմբռնումը ընտանիքի մասին կը հաստատուի նաև գիտական հետազօտութիւններովը և տեսութիւններովը հասարակական գիտութիւններու, որոնք ընտանիքը կը նկատեն հիմնաքարը մարդկային ընկերութեան, հետևաբար նաև ազգութիւններու կեանքին ու կազմաւորման և անոնց գոյատևման, որով և պատմութեան:

Կրօնական և գիտական այս ճշմարտութիւններու լոյսին ներքև, հետզհետէ առաւել անհրաժեշտ կը դառնայ մեր օրերուն պաշտպանել և ամրապընդել ընտանիքի հաստատութիւնը որ կրօնական ըմբռնումով սուրբ է իբրև աստուածային տնտեսութեան մէկ տնօրինութիւնը, իսկ հասարակական գիտութիւններու եզրակացութիւններով՝ հիմքն է ու երաշխիքը մարդկային անհատական ու հաւաքական կեանքի, մարմնոյ ու հոգւոյ առողջութեան ու բարոյական կեանքի հաւասարակշռութեան և ներդաշնակութեան:

Հոգևորականներ, դաստիարակներ, գիտութեան ու արուեստի մարդիկ և օրէնսդիրներ, բոլոր երկիրներէն, ձեռք-ձեռքի տուէք վերականգնելու համար սրբութիւնը ընտանիքին:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(1 մայիսի 1982 թ.)

Աստուծո անբավ ողորմությամբ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին կշարունակե իր սուրբ առաքելությունը մեր հավատավոր ժողովուրդի ծոցին մեջ, թե՛ ի Հայաստան և թե՛ ի սփյուռս աշխարհի, հետևեալ առավել արդյունավետությամբ, շնորհիվ մանավանդ մեր Եկեղեցվո սպասավորներու հոգեշեն, եռանդաշատ աշխատանքին:

Դուք, սիրելիներ Մեր, կպատկանիք մեր Եկեղեցվո հավատարիմ սպասավորներու այդ հոյլին, Ձեր բարեշան առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հովանիին ներքև, նվիրված՝ ձեվի վստահված մեր ազգի վավակներուն հոգիներուն շինության ու մխիթարության:

Մեծ է խորհուրդը ու նույնքան մեծ է կոչումը հայ հոգևորականի աշխատանքի և երանի անոնց, որ այդ մեծ խորհուրդի, այդ մեծ կոչումի գիտակցությամբ պայծառակերպված, կհաջողին իրենց սրբական պարտքը կատարել իբրև մշակներ առանց ամոթ, պահելով-պահպանելով մեր պանդուխտ վավակները ի Միացյալ Նահանգներ, մեկ ու անբաժան մեր նախնյաց հավատքի լույսով, մեր նախնյաց քրիստոսաբույր մշակույթի արժեքներով, մեր նախնյաց հայրենաբաղձ ապրումներով դեպի սուրբ գրական աշխարհը մեր Մայր Հայաստան:

Այս խոհերով ու հորդորներով սրտանց կողջունենք ձեր համագումարը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն ձեվի ամենուդ կբերենք Մեր ջերմագին գնահատանքը և հայրապետական օրհնությունը, մաղթելով ձեր համագումարին արդյունառատ աշխատանք Սուրբ Հոգվո ներշնչանքով:

Կմաղթենք նաև, որ նույն ներշնչանքով ու հոգեշեն եռանդով շարունակեք նաև հառաջիկային ձեր նվիրյալ ծառայությունը առաջնորդությանը ներքև թեմակալ սրբական առաջնորդի:

«Ձի թէպէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ իբրեւ տեսանեմ վկարգն ձեր եւ վհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս Յիսուս» (Կորնթ. Բ 5): Ամեն:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1 մայիսի 1982 թ.)

Երջանիկ ենք, Տիրոջը ողորմությամբ նաև այս տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն բերելու ձեզի բոլորիդ Մեր հայրական սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը, Սրտաբուխ մաղթանքով, որ եղբայրական սիրո համերաշխ մթնոլորտի մեջ և իմաստությամբ, լուծեք ձեր առաջ դրված հարցերը և նոր ծրագիրներ կազմեք, հառաջիկա տարեշրջանին կանոնք իրագործելու համար, հառավել շինություն տիրախնամ թեմիդ հավատացյալ ժողովուրդի հոգևոր կյանքի, հառավել ամրապնդում ձեր համայնքներու վարչա-կազմակերպչական գործունեության և մանավանդ հառավել կրոնա-բարոյական դաստիարակություն ձեր երիտասարդ սերունդներու:

Այս առթիվ Մեր ջերմ գնահատանքը կհայտնենք թեմական խորհուրդին և թեմիդ եկեղեցիներու ծխական խորհուրդներուն, անցյալ տարիներու արդյունաշատ իրագործումներուն համար, ընդ բարեջան առաջնորդությամբ Մեր սիրեցյալ գերաշնորհ Տ. Թորգոմ սրբազան արքեպիսկոպոսի, որ իրեն հատուկ ժրաջան գործունեությամբ անշեղ կերպով կանգուն մնաց իր հոգևոր առաքելության ճամբուն վրա, միշտ բարձր պահելով Հայաստանյայց Եկեղեցվո և ձեր թեմական կազմակերպության հեղինակությունը, ձեր ժողովուրդի ծոցին մեջ, ինչպես նաև քույր Եկեղեցիներու լայն շրջանակներեն ներս:

Ի սրտե կմաղթենք, որ հետագա տարեշրջաններուն միշտ նույն ոգեշնչումով ու բարի եռանդով ամենքդ համախումբ թեմակալ ձեր սրբազան առաջնորդի հովանիին ներքև՝ ձեռք-ձեռքի տված, գործեք սիրով միաբան, միշտ մեկդ մյուսին նեցուկ, միշտ մեկդ մյուսին օգնական, միշտ մեկդ մյուսին խրախուսող, ալի բոլորիդ նվիրական նպատակն է ամերիկյան քրիստոսասեր մեծ երկրին մեջ սուրբ պահել Հայ Առաքելական մեր Եկեղեցվո անունը և միշտ բարձր պահպանել հայ ազգի բարի ու շինարար համբավը:

Սիրելիներ Մեր, թող Աստված ձեզի բոլորիդ պարգևե մարմնո և հոգվո անսասան առողջություն ու մարտակից մնա ձեզի ամենուդ ի խնդիր ձեր եկեղեցաշեն ձեռնարկներու, ձեր ազգանվեր ծրագիրներու լիակատար հաջողության:

«Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի» (Ա Կորնթ. ԺԴ 40): «Եւ արդ, կիանդէս սիրոյ ձերոյ եւ վերոյ պարծանացն վասն ձեր, ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Բ Կորնթ. Ը 24): Ամեն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(5 մայիսի 1982 թ.)

Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան,

Գոհություն Աստուծո ամենակալին, որ ջեն և պայծառ կպահե թեմիդ եկեղեցիները Ձերդ Սրբազնության հոգեշեն առաջնորդության ներքև, համերաշխ, շինարար գործակցությամբ թեմական իշխանությանց և հավատավոր հոգևոր դասին:

Այսօր ուրախ սրտով և ջերմ գնահատանքով Մեր հայրական ողջույնը և օրհնությունը կբերենք Սուրբ Էջմիածնեն տիրախնամ թեմիդ Պատգամավորական Ժողովին՝ մաղթելով, որ Տերը բոլորիդ մնա օգնական և լիակատար հաջողությամբ պսակե ձեր բոլոր եկեղեցաշեն ծրագիրները:

Թող Սուրբ Հոգին լուսավորե և ջերմացնե ձեր սրտերը և պտղառատ դարձնե ձեր ձեռաց գործերը:

Գերաշնորհ Սրբազան, ընդունեցեք Մեր սերը, Մեր գնահատանքը, Մեր խնդակցությունը և բարի աղոթքները՝ ուղղյալ Ձեզի և բոլոր բարեջան պատգամավորներուն:

«Զի թէպէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ, խնդամ իբրեւ տեսանեմ զկարգն ձեր և հաստատութիւն հաւատոցն ձերոց՝որ ի Քրիստոս Յիսուս» (Բ Կորնթ. Բ 5):

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ

Յոյժ մխիթարական է Մեզ համար հաստատել, որ Դուք որպէս ուխտապահ և բարեջան սպասաւոր Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու, տասներեք տարի է, որ ծառայել էք բարեխղճութեամբ մեր Մայր Եկեղեցուն նախ Մայր Աթոռում, ապա Ֆրանսայում որպէս հոգևոր հովիւ, իսկ այժմ էլ ծառայում էք Պուէնոս Այրեսում որպէս առաջնորդական տեղապահ:

Մեզ քաջ յայտնի է Ձեր հոգևոր նուիրումը և Ձեր նախանձախնդիր ոգին Հայ Եկեղեցու աւանդութիւնների պահպանման գործում, ինչպէս նաև հաւատարմութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ, որին հարազատ զաւակն էք Դուք:

Ի գնահատումն Ձեր հոգեշէն գործունէութեան այսու Հայրապետական Մեր կոնդակով շնորհում ենք Ձեզ **ծաղկեայ Փիլոն** կրելու իրաւունք:

Աղօթում ենք Ձեր կեանքի արևշատութեան և յետագայ Ձեր գործունէութեան է՛լ աւելի արդիւնաւէտութեան համար:

«Այսուհետև զօրացարուք Տէրամբ, և կարողութեամբ զօրութեան նորա: Եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ» (Եփես. Զ 10—11): Ամէն:

Օրհնութեամբ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 17 յունիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տուամարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրաւանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. *1143*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԼԻՈՆ

Մենք կաթողիկոս Ամենայն Հայոց, յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի վաւակներու մէջ կը գտնուին ազնուահոգի անձնատուրութիւններ, որոնք իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի առաւել ջէն ու պայծառ դառնայ մեր Եկեղեցւոյ պատմական կեդրոն Սուրբ Էջմիածինը:

Դուք, յարգարժան Տիար, իբրև մէկ ազնիւ վաւակը մեր հաւատաւոր ազգին, յաւերժացնելով Ձեր բարեպաշտ հօր՝ Եղիշէ Փափազեանի անթառամ յիշատակը, Ձեր սրտաբուխ նուիրատուութեամբ կը նպաստէք Մայր Աթոռիս պայծառութեան, որուն համար Ձեզի կը յայտնենք Մեր շնորհակալութիւնը:

Այսու գնահատելով Ձեր սրտագին նուէրը, այլև սիրով ընդառաջելով միջնորդութեանը Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի, Մեր սոյն կոնդակով Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» շքանշանը, որ վայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար, արեւոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ և ընտանեկան երջանկութեամբ, որպէս մշտայուղ նշան անմոռաց սիրոյ առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 11 յունուարի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1103



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՏԻԳՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՂՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԼԻՈՆ

Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի կաւակներու մէջ կը գտնուին ակնուահոգի անձնատրութիւններ, որոնք իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի առաւել շէն ու պայծառ դառնայ մեր Եկեղեցւոյ պատմական կեդրոն Սուրբ Էջմիածինը:

Դուք, յարգարժան Տիար, իբրև մէկ ակնիւ կաւակը մեր հաւատաւոր ազգին, յաւերժացնելով Ձեր բարեպաշտ հօր՝ Եղիշէ Փափազեանի անթառամ յիշատակը, Ձեր սրտաբուխ նուիրատուութեամբ կը նպաստէք Մայր Աթոռիս պայծառութեան, որուն համար Ձեզի կը յայտնենք Մեր շնորհակալութիւնը:

Այսու գնահատելով Ձեր սրտագին նուէրը, այլև սիրով ընդառաջելով միջնորդութեանը Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի, Մեր սոյն կոնդակով Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» շքանշանը, որ վայն կրէք Ձեր ակնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար, արևոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ և ընտանեկան երջանկութեամբ, որպէս մշտայուղ նշան անմոռաց սիրոյ առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Ողջ լերուք կօրհնեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 11 յունուարի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1104



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԼԻՈՆ

Մեզի համար անհուն մխիթարութիւն է հաստատել թէ մեր ժողովուրդի ծոցին մէջ կան ազնուասիրտ անձնաւորութիւններ, որոնք սատար կը հանդիսանան մեր Սրբութիւն Սրբոց բազմադարեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեան:

Դուք, յարգարժան Տիար, իբրև հարազատ զաւակը մեր հաւատաւոր ազգին, յաւերժացնելով Ձեր բարեպաշտ հօր՝ Մանուկ Մանուկեանի անթառամ յիշատակը, Ձեր սրտաբուխ նուիրատուութեամբ կը նպաստէք Մայր Աթոռիս պայծառութեան, որուն համար Ձեզի կը յայտնենք Մեր շնորհակալութիւնը և կը յղենք Ձեզի և Ձեր ընտանիքին Մեր հայրապետական օրհնութիւնը:

Այլև ջերմապէս գնահատելով Ձեր սրտագին նուէրը և սիրով ընդառաջելով հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեանը, Մեր սոյն կոնդակով Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» շքանշանը, որ կայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար արևոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք կօրհնեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15 յունուարի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1106



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐՊԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԼԻՈՆ

Մեզի համար անհուն մխիթարութիւն է հաստատել թէ մեր ժողովուրդի ծոցին մէջ կան ապնուասիրտ անձնաւորութիւններ, որոնք սատար կը հանդիսանան մեր Սրբութիւն Սրբոց բազմադարեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեան:

Դուք, յարգարժան Տիար, իբրև հարազատ զաւակը մեր հաւատաւոր ազգին, յաւերժացնելով Ձեր բարեպաշտ հօր՝ Մանուկ Մանուկեանի անթառամ յիշատակը, Ձեր սրտաբուխ նուիրատուութեամբ կը նպաստէք Մայր Աթոռիս ծառութեան, որուն համար Ձեզի կը յայտնենք Մեր շնորհակալութիւնը և կը յղենք Ձեզի և Ձեր ընտանիքին Մեր հայրապետական օրհնութիւնը:

Այլև ջերմապէս գնահատելով Ձեր սրտագին նուէրը և սիրով ընդառաջելով հայրապետական պատուիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեանը, Մեր սոյն կոնդակով Ձեզի կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» շքանշանը, որ վայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով շատ երկար արևոտ ու խաղաղ տարիներ լիակատար քաջառողջութեամբ և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք կօրհնեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15 յունուարի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1105



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԱՎԵՏԻՍ ՁԱԳԸՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՒԵՏԻՍ ՁԱԳԸՃԵԱՆԻՆ, ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԳԱՀԻՐԷ

Մեզի համար անհուն մխիթարութիւն է հաստատել թէ մեր ժողովուրդի վաւակներէն ընտրեալներ սատար կը հանդիսանան սփիւռքի մեր ազգային-եկեղեցական հաստատութիւններու գոյատևման ու ծաղկումին իրենց բարոյական և նիւթական վոհողութիւններով:

Դուք, յարգարժան Տիար, կը պատկանիք ընտրեալներու շարքին, որպէս եկեղեցաշէն անձնաւորութիւն և ազգային բարերար: Ձեր առատաձեռն նուիրատուութիւններով Դուք միշտ օգնութեան ձեռք երկարած էք ազգային, բարեսիրական և մշակութային հաստատութիւններուն:

Մեկ քաջ յայտնի է նաև, թէ մեծագումար նուիրաբերումով Դուք հաստատած էք հիմնադրամ մը, ի յիշատակ Ձեր ողբացեալ Տիկնոջ՝ Վերժինի, հիմնադրամ, որմէ պիտի օգտուին հայագիտական առարկաներու ուսուցիչները: Առատաձեռնութեամբ, հանդիսացած էք նաև հայերէն գիրքերու մեկենաս, ի քաջալերութիւն հայ գրականութեան գործիչներուն:

Մենք սրտանց կը գնահատենք, Ձեր բազում նուիրատուութիւններն ու բարերարութիւնները և ընդառաջելով Եգիպտահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Զաւէն արքեպիսկոպոս Չինչինեանի միջնորդութեան, այսու Հայրապետական Մեր կոնդակով Ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը և կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» Ա կարգի շքանշանը, մաղթելով, որ վայն կրէք Ձեր բարի կուրծքին վրայ ազնիւ հպարտութեամբ, բազում երկար տարիներ քաջառողջութեամբ և հոգւոյ խաղաղութեամբ:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 16 մայիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1130



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԲՈԼ ՔԻԼԻՏՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԲՕԼ ՔԻԼԻՏՃԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԳԱՀԻՐԷ

Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, յոյժ երջանիկ ենք, որ մեր ազգի կաւակներու մէջ կը գտնուին ազնուահոգի անձնաւորութիւններ, որոնք իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը կը նուիրաբերեն, որպէսզի առաւել ջէն ու պայծառ դառնան սփիւռքի մեր եկեղեցական ու ազգային հաստատութիւնները:

Դուք, յարգարժան Տիար, իբրև հարազատ կաւակը մեր հաւատաւոր ազգին, բազում տարիներէ ի վեր անձնուիրաբար գործոն կերպով կը մասնակցիք տեղւոյդ եկեղեցւոյ կեանքի յառաջընթացքին որպէս թեմական ժողովի ատենապետ, մեծ յարգանք վայելելով Ձեր գաղութին մէջ անխտիր բոլորին կողմէ:

Մեզ քաջ յայտնի է նաև, որ իբրև կրթասէր անձնաւորութիւն, նիւթական մեծագումար միջոցներով սքանչելի գործ կատարած էք հաստատելով Հրատարակչական հիմնադրամ մը, այն յանձնելով Ազգային Իշխանության մատակարարման:

Մենք սրտանց կը գնահատենք Ձեր բազում տարիներու ազգաշէն վաս-

տակը և ընդառաջելով Եգիպտահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաջնորդի Տ. Զաւէն արքեպիսկոպոս Չինչինեանի միջնորդութեան, այսու Հայրապետական Մեր կոնդակով Ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը և կը շնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» Ա կարգի շքանշանը, մաղթելով, որ դայն կրէք Ձեր ակնիւ կուրծքին վրայ արդար հպարտութեամբ բաղում երկար տարիներ, քաջառողջութեամբ և ընտանեական երջանկութեամբ:

«Ողջ լերուք կօրհնեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 17 մայիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1129





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԱԳ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐԲԵՐՅԱՆԻՆ՝ ՆՐԱ 50-ԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ԲԱՐԵՇՆՈՐՀ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳ ՊԷՐՊԷՐԵԱՆԻՆ, ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊՈՒՔՐԷԾ

Մեզի համար մխիթարական է, որ մեր պանդուխտ ժողովուրդի ծոցին մէջ փոքր չէ թիւը Մեր հարազատ զաւակներուն, որոնք իրենց հայաջունչ եռանդուն գործունէութեամբ, նեցուկ կը հանդիսանան մեր եկեղեցական նուիրական աւանդութեանց պահպանման:

Այդ ընտրեալներու հոյլին պատկանող մեր հարազատներէն կը հանդիսանաք նաև Դուք, աւելի քան կէսդարեայ Ձեր բոլորանուէր անշահախնդիր եկեղեցական ծառայութեամբ, ի պայծառութիւն մայրաքաղաքիդ Սուրբ Հրեշտակապետաց Մայր տաճարին:

Արդ, ի գնահատումն Ձեր երկարամեայ եկեղեցանուէր վաստակին, սիրով կ'ընդառաջենք ռումանահայ և պուլկարահայ թեմերու առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկեանի միջնորդութեան և այսու Մեր կոնդակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն կը յղենք Ձեզի Մեր Հայրապետական օրհնութիւնը, ջերմ աղօթքով, որ Տէրը Ձեզի պարգևէ արևշատ ևս երկար տարիներ քաջառողջութեամբ և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2 յունիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1138



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄՈՆՐԵԱԼԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆ ԲԱՐԵՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՀՏ ԱՆԴԱՄՈՑ, ՀԱՐԱՉԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՄՈՆԹՐԷԱԼ

Գոհութիւն Աստուծոյ ամենակալին որ քսանևհինգ տարիներ առաջ քրիստոսասէր ու հիւրընկալ Գանատեան հողի վրայ մարմին առաւ և կեանքի կոչուեցաւ ապգանուէր Հ. Բ. Ը. Միութեան Մոնթրէալի մասնաճիւղ, կարճ ժամանակի մէջ դառնալով արժանի ժողովրդի բոլոր խաւերու սիրոյն և քաջալերանքին:

Իրօք, Հ. Բ. Ը. Միութիւնը, ամենուրէք, հայ սփիւռքի տարածքի վրայ, բարի գործի քրիստոնէական իր գաղափարականով, մեր ժողովուրդի նոր սերունդներու դաստիարակութեան ի խնդիր ծաւալած իր սքանչելի գործունէութեամբ, մեր ապգի գոյատևման նուիրուած իր առաքելութեամբ, կայ և կը մնայ հայապահպան հպօրագոյն կազմակերպութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ կողքին, միշտ անոր նեցուկ, միշտ անոր ծառայող:

Բարձրօրէն գնահատելով մասնաճիւղիդ քսանևհինգ տարիներու տքնաջան աշխատանքն ու արդար վաստակը և ընդառաջելով թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեանը, այսու Մեր կոնդակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն մխիթարուած սրտով կը բերենք Մեր հայրական սիրոյ ողջոյնը և հայրապետական օրհնութիւնը մասնաճիւղիդ վարչութեան անձնուէր ղեկավարներուն, միութեանդ բարեսէր անդամներուն և համայն Գանատահայ հաւատաւոր մեր զաւակներուն, մաղթելով բոլորիդ մշտանորոգ եռանդ, լաւատեսութեան անմար ոգի և աներեր հաւատք դեպի մեր վերածնած ապգի ու հայրենիքի ներկան ու ապագան:

Ձեր այս առաքելութեան ճանապարհին Ձեզի հետ են Մեր աղօթքները, Մեր սէրը, Մեր մեծարանքը:

«Զի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ իբրև տեսանեմ կկարգն ձեր և կհաստատութիւն հաւատոցն ձերով որ ի Քրիստոս Յիսուս» (Կողոս. Բ 5): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 16 յունիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տուամարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1142



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 2-ին, կիրակի.—Կարմիր Կիրակէ.
Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Արիւն մարտիրոսաց հիմն եկեղեցւոյ» բնաբանով քարոզ է խոսում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ հայրենի երգահան Ալեքսեյ Հեքիմյանի:

* *
*

Մայիսի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միաբան Տ. Ղևոնդ արքեպ. Չեբեյանը:

*
* *

Մայիսի 7-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մայիսի 9-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի.
Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն աբղ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ» (Ա Կորնթ. Ա 18) բնաբանով:

*
* *

Մայիսի 14-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները մեկօրյա պտույտի են մեկնում Գառնի և Ս. Գեղարդ վանք:

*
* *

Մայիսի 15-ին, շաբաթ.—Այսօր Ս. Գայանե վանքի գերեզմանատանը, Անթիլիասի դպրեվանքի առաջին վերատեսուչ Տ. Շահե արքեպ. Գասպարյանի շիրմին, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ հանգուցյալ սըրբազանի ծննդյան հարյուրամյակին և դպրեվանքի հիմնադրման հիսնամյակի առիթով՝ ներկայությամբ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միաբան Տ. Ղևոնդ արքեպ. Չեբեյանի և Մայր Աթոռի միաբանության:

*
* *

Մայիսի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ղևոնդ արքեպ. Չեբեյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ հավատացյալ ժողովրդին ներկայացնելով Մոսկվայում գումարված կրոնական գործիչների խաղաղության համագումարի աշխատանքների մասին: Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Տ. Շահե արքեպ. Գասպարյանի հիշատակին: Այս առթիվ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսը, որպես իր ուսուցչի, համառոտակի ներկայացնում է հանգուցյալ սրբազանի եկեղեցական ու կրթական գործունեությունը:

*
* *

Մայիսի 17-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվեցին 1981—82 ուսումնական տարվա գրավոր և բանավոր ամավերջի քննությունները:

*
* *

Մայիսի 20-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին» (Եբր. ԺԱ 1) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ «փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սսոյ ի Ս. Էջմիածին, յամի Տեառն 1441»;

*
* *

Մայիսի 21-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական ընդլայնված հավաքույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Արարատյան թեմի քահանայից դասը, Վաղարշապատի եկեղեցիների վանահայրերը և այլ հյուրեր:

Հավաքույթին ներկա էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը:

Հավաքույթի բացման խոսքով հանդես է գալիս Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Այնուհետև Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը ներկայացնում է Մոսկվայում տեղի ունեցած կրոնական գործիչների Խաղաղության համաշխարհային համագումարի աշխատանքների ժամանակագրությունը:

Վերջում Սիոն արքեպիսկոպոսը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ վերոհիշյալ համագումարի մասին իր տպավորությունները հաղորդելու: Նորին Սրբությունը, նախ ողջունելով բոլորի ներկայությունը, այս առթիվ կատարում է մի շարք խորհրդածություններ ու աղոթում մարդկության ամենամեծ իդեալի՝ աշխարհի տևական խաղաղության համար:

Հավաքույթն ավարտվում է խմբովին արտասանած «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

*
* *

Մայիսի 23-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէր առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս» (Հովհ. Զ 69) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանի սեղանատանը տրվում է հրաժեշտի ճաշկերույթ՝ ի պատիվ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանի և

Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանի, որոնք ուխտավորաբար գտնվում էին Մայր Աթոռում:

Ճաշկերույթին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Մայր Աթոռի միաբաններ և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթին հրավիրված էին նաև հյուրաբար մայր հայրենիքում գտնվող Հ. Բ. Ը. Միության Կենտրոնական վարչության վարիչ-տնօրեն տիար Միսաք Հայկենցը և հայրենի բանաստեղծուհի Մարո Մարգարյանը:

Ճաշկերույթի ընթացքում նախ խոսեց Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, որը առաջարկեց հոտնկայս բաժակ բարձրացնել Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության, առողջության և բոլոր ծրագրերի իրականացման համար:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը, բարձր գնահատելով Տ. Զավեն և Տ. Գյուտ սրբազանների գործունեությունը սփյուռքի դժվարին պայմաններում, բարի ճանապարհ է մաղթում նրանց և ցանկանում, որ նրանք վերանորոգված շարունակեն իրենց եկեղեցաշեն ազգանվեր արդյունաշատ գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունն է տալիս նաև տիար Միսաք Հայկենցին, գնահատում Բարեգործականի կազմակերպության մեջ նրա ակտիվ գործունեությունը և մաղթում, որ նա շարունակի ծառայել Համազգային այդ մեծ միությանը:

Ապա շնորհակալական անկեղծ խոսքով հանդես են գալիս Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը և տիար Միսաք Հայկենցը ու ցանկանում Վեհափառ Հայրապետին նորանոր արդյունավետ տարիներ:

Բանաստեղծուհի Մարո Մարգարյանը ընթերցում է իր «Զոն Վեհափառին» և մի քանի այլ ստեղծագործություններ:

Ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի Գոհաբանական աղոթքով:

*
* *

Մայիսի 24-ին, երկուշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը:

*
* *

Մայիսի 25-ին, երեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Տ. Գյուտ եպս. Նագաշյանը:

*
* *

Մայիսի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բուենոս Այրեսի հոգևոր հովիվ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը խոսում է արգենտինահայ գաղութի եկեղեցական ու մշակութային կյանքի մասին:

*
* *

Մայիսի 30-ին, կիրակի.—Հոգեգալուստ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Իսկ Մխիթարիչն, Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցցէ ձեզ զամենայն և յիշեցուցցէ զամենայն զոր ինչ ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 2-ին, չորեքշաբթի.— Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունիսի 3-ին, հինգշաբթի.— Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հունիսի 6-ին, կիրակի.— Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի արմատ ամենայն չարեաց՝ արծաթասիրութիւն է:» (Ա Տիմոթ. Զ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 7-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր Ս. Հռիփսիմե վանքի տաճարում պատարագ է մատուցում Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Անձինք Նուիրեալք սիրոյն Քրիստոսի...» (Շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Եկեղեցու բարերար Երվանդ Հյուսիսյանի:

*
* *

Հունիսի 8-ին, երեքշաբթի.— Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր Ս. Գայանե վանքի տաճարում պատարագ է մատուցում վանահայր Տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Գայանէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի. ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս» (Շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցեալ կաթողիկոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, սարկաւագաց և ամենայն ուխտի մանկանց Հայաստանեայց Եկեղեցւոյ»:

*
* *

Հունիսի 9-ին, չորեքշաբթի.— Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Ս. Գեղարդ վանքի վանահայր Տ. Եղիշե քհն. Սարգսյանը կարդում է բանախոսություն՝ «Խաչատուր վարդապետ Կեսարացին և Նոր Զուղայի հայ գաղութի մշակութային կյանքը» թեմայով:

*
* *

Հունիսի 10-ին, հինգշաբթի.— Տօն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր Ս. Շողակաթ վանքի տաճարում պատարագ է մատուցում վանահայր Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Այսօր շնորհեցաւ մեզ դեղ կենաց նշխարք սրին ոսկերաց. ի ձեռն Սուրբ Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի» (Շարական) բնաբանով:

*
* *

Հունիսի 12-ին, շաբաթ.— Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

*
* *

Նույն օրը, պատարագից հետո, ճեմարանի ուսանողությունը ուխտի է մեկնում Ս. Խորվիրապի վանք:

*
* *

Հունիսի 13-ին, կիրակի.— Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» (Շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է մաղթանք Ս. Էջմիածնի:

*
* *

Հունիսի 14-ին, երկուշաբթի.— Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողները, տեսչության ղեկավարությամբ, մեկնեցին չորսօրյա շրջապտույտի դեպի Սիսիան, Գորիս, Զերմուկ՝ ծանոթանալու այդ շրջանի պատմական վանքերին և հուշարձաններին, և լավագույն տպավորությամբ վերադառնում են Մայր Աթոռ:

*
* *

Հունիսի 17-ին, հինգշաբթի.— Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Տ. Դավիթ եպս. Սահակյանը:

*
* *

Հունիսի 20-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Տ. Հովնան աբդ. Տերտերյանը:

*
* *

Հունիսի 21-ին, երկուշաբթի.— Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Բուենոս Այրեսի հոգևոր հովիվ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

*
* *

Հունիսի 23-ին, չորեքշաբթի.— Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է վերադառնում Տ. Ներսես եպս. Պոլապալյանը, որը երկար տարիներ արդյունավորությամբ և ձեռնհասորեն պաշտոնավարում էր Լոնդոնում, որպես Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ:

*
* *

Հունիսի 26-ին, շաբաթ.— Գիտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ.

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, պատարագ է մատուցում Տ. Բարսեղ քհն. Ղալարյանը:

*
* *

Հունիսի 27-ին, կիրակի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Դավիթ եպս. Սահակյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Թագաւոր երկնաւոր վեկեղեցի քո անշարժ պահեա...» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 3-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, տեղի է ունենում ճեմարանի 1981—1982 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդեսն սկսվում է Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով, որից հետո հնչում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը: Ապա հոգևոր ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է «Ճեմարանի քայլերգ»-ը:

Հոգևոր ճեմարանի ուսմասվար Տ. Հայկազուն աբղ. Նաջարյանը հանդես է գալիս հանդիսության բացման հետևյալ խոսքով.

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԲՂ. ՆԱՋԱՐՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Տակավին երեկ էր կարծեք, որ հնչեց 1981—1982 ուսումնական տարեշրջանի առաջին զանգը՝ ծանուցանելով ուսումնառության սկիզբը հոգևոր ճեմարանի հարկի ներքո:

Հավիտենական ընթացքի մեջ ժամանակի գիտակցությունը և ըմբռնողությունը մարդու կողմից հրաշք երևույթներից մեկն է, մի երևույթ, որ իմաստավորում և նպատակասլաց է դարձնում մարդու կյանքը այս աշխարհում:

Ահա հավաքվել ենք այստեղ, Աստուծո ողորմությամբ և Վեհափառ Հոր օրհնությամբ, փակելու և պատմությանը հանձնելու 1981—82 ուսումնական տարեշրջանը: Մի տեսակ հաշվետվություն է սա, հաշիվ տալու Աստուծո առջև, Վեհափառ Հայրապետի առջև և մեր ժողովրդի առջև:

Երբ պատմությանն ենք հանձնում այս տարեշրջանը, այդ չի նշանակում, թե այն այլևս փակված էջ է: Այն դառնում է մի աղյուս և անբաժան մասնիկը հայ հոգու և մտքի այն շինվածքի, որը մենք աշխատում ենք կերտել այս հարկի տակ:

Տարեշրջանը սկսեցինք դասախոսական կազմի հետ միասին մեծ ոգևորությամբ և նվիրումով, մի հանգամանք, որը շարունակվեց ամբողջ տարեշրջանի ընթացքում: Սա չի նշանակում իհարկե, թե չունեցանք տկարություններ, ձախողություններ կամ հուսախաբություններ, բայց ընդհանուր առմամբ գոհունակ սրտով է, որ մոտենում ենք այս հաշվետվությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐՈՎ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՎ
(3 հունիսի 1982 թ.)

Մեր առօրյան ճեմարանի հարկի ներքո՝ սկսած ժամերգությամբ, դասավանդություններով, ուրբաթ երեկոյան խոկումներով, գրական-երաժշտական երեկոներով և նույնիսկ պտույտներով, հիմնականում ունեին մի նպատակ՝ տալ մեր ուսանողներին հայեցի, ազգային դաստիարակություն՝ կրոնական հագեցվածությամբ: Մեր սերն ու նվիրվածությունը դեպի Մայր Աթոռի հոգու և մտքի այս դարբնոցը անհուն է: Եթե եղան անհասկացողություններ և պարագաներ, երբ ստիպվեցինք պատժելու մեկին կամ հեռացնելու մյուսին, մենք այդ իրողությամբ ավելի մտատանջվեցինք և ցավեցինք, սակայն այդ քայլին դիմեցինք ելնելով տվյալ ուսանողի և ընդհանուրի շահերից:

Կարգապահությունն ու հոգեկան, բարոյական արժեքները գրավում են առաջնային տեղ, որոնք և կազմում են հիմքը ապագա եկեղեցական գործունեության:

Սիրելի ուսանողնե՛ր, ձեր մեջ մենք տեսնում ենք ապագա եկեղեցականներին, մեր օգնականներին և մեր գործի շարունակողներին, այն մեծ գործի, որի հիմնադիրը եղավ մեր առաջին ուսուցիչը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցը: Բավական չէ պարծենալ միայն փառավոր անցյալով, ժամանակն է, որ այդ փառավոր անցյալը ունենա իր արժանի և նույնքան շքեղ ներկան ու ապագան: Դրա համար բոլոր բարենպաստ պայմանները ունենք՝ շնորհիվ այս հաստատության նկատմամբ մեր սիրելի Վեհափառ Հայրապետի հատուկ ուշադրության, հոգատարության և խնամքի:

Ձեզ՝ սիրելի ուսանողնե՛ր, ձեզ մնում է միայն աշխատել ու սովորել, Հայոց Հայրապետի ու մեր բարեպաշտ ժողովրդի բարի ակնկալությունները ի դերև չհանել:

Այնուհետև հոգևոր ճեմարանի ուսանողները՝ ղեկավարությամբ եկեղեցական երաժշտության դասախոս Հայկ Ֆրունջյանի, կատարում են «Էջ Միածինն ի Հօրէ» և «Որք վարդարեցին» շարական-խմբերգերը:

Ա լսարանի ուսանող Թորոս Մելենկիչյանը արտասանում է Դանիել Վարուժանի «Հայր օրհնե» բանաստեղծությունը: Կոմիտաս վարդապետի «Վաղարշապատի պայր» ստեղծագործությունը դաշնամուրի վրա կատարում է նախապատրաստական դասարանի ուսանող Վազգեն Պերպերյանը:

Ապա ուսանողության անունից շնորհակալական հետևյալ խոսքն է ընթերցում ճեմարանի ավարտական՝ Գ լսարանի ուսանող Գարուշ սրկ. Լազարյանը.

«Այսօր, հավաքված Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դահլիճում, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, մասնակցում ենք 1981—82 ուսումնական տարվա վերջին դասին: Մի դաս, որ նման չի տարվա մյուս դասերին, այլ հոգևոր ճեմարանի հաշվետվությունն է ամբողջ տարվա կատարած աշխատանքների համար:

Մեծ ոգևորությամբ և սիրով ուսանողությունը աշխատել է բարձր պահել ճեմարանի անունը, լուրջ մոտեցում ցույց տալ ուսման հարցերին և մեծ նվիրումով ի գործ դնել այն բոլոր հրահանգներն ու կանոնները, որոնք առաջարկվում էին տեսչության կողմից: Ուսանողությունը ուսումնական տարվա սկզբից իրենից ներկայացնում է մի կուռ ու անքակտելի ընտանիք: Յուրաքանչյուրը առանձին-առանձին քաջ գիտակցում է, թե ինչպիսի մեծ գործի է նվիրվել, որն է այս տարվա իր նպատակը, նպատակ, որ բոլորի համար պայմանավորված է երկու բառով՝ «լավ սովորել»: Իրապես լավ սովորելով և առարկաների խորը ուսումնասիրությամբ միայն կարող ենք ձեռք բերել այն բոլոր գիտելիքները, որոնք անհրաժեշտ են Հայ Եկեղեցու ամեն մի ապագա սպասավորի: Եթե ուսման հարցերը անհրաժեշտորեն բխում են ճեմարանի ներքին կյանքից, ապա որքան ավելի անհրաժեշտ է ուսանողների կարգապահական հարցը: Այս երկու կարևոր հարցերը՝ ուսումը և կարգապահությունը, ոչ միայն տեսչությանը մտահուգող հարցերն էին, այլև մեր՝ յուրաքանչյուրիս հարցը, քանի որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա պատասխանատվության զգացում ինքն իր առաջ և բոլորի առաջ:

Ուսանելով ճեմարանի հարկի տակ, ուսումնասիրելով մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ավետարանը, ամբողջապես գիտակցել ենք, որ այդ պատասխանատվության զգացումը, ընկերության մեջ փոխօգնությունը, հարգանքը հիմնված են մարդկային այն մեծ

սիրո վրա, որը ավետել է մեզ մեր Փրկիչը: Այդ սիրո մեծ զգացումն է տիրում ճեմարանի հարկի տակ, դասախոսական կազմի և ուսանողության միջև:

Այսօր հատկապես նշանակալից օր է մեզ՝ Գ լսարանցիներիս համար, քանի որ մենք մի վերջին անգամ որպես ուսանող մասնակցում ենք ամավերջի հանդեսին: Ետևում են մնացել անցած օրերը և զգում ենք, որ շուտով այդ օրերը հուշ են դառնալու և ուսումնական տարիների կարոտը տոչորելու է մեր հոգիները: Ավարտում ենք և ավելի մեծ հույսով նայում մեր ապագա գործունեությանը: Մեկանից յուրաքանչյուրը խոստանում է, որ իր ապագա ողջ աշխատանքը կուղղի միայն մի նպատակի, այն է՝ իր համեստ լման ներդնելու Մայր Աթոռի և մեր Եկեղեցու ապագա բարգավաճման և ծաղկման գործում:

Ավարտելով իմ խոսքը, ցանկանում եմ շնորհակալական իմ առաջին խոսքը ուղղել Վեհափառ Հայրապետին՝ այն ջերմ հոգատարության և հայրական վերաբերմունքի համար, որ միշտ զգացել ենք մենք: Թույլ տվեք հավաստիացնել Ձեզ, Վեհափառ Տեր, որ մենք հուսախաբ չենք անի Ձերդ Սրբության բարձր վստահությունը, կլինենք ճեմարանի արժանի շրջանավարտներ՝ միշտ բարձր պահելով հոգևոր ճեմարանի պատիվը:

Մեր շնորհակալական խոսքն ենք ուղղում նաև հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին, որոնք իրենց ակնիվ ու նվիրյալ աշխատանքով միշտ նըպաստել են ուսանողներիս գիտելիքների ամրապնդմանը: Սիրելի դասախոսներ, համոզված եղեք, որ Ձեր ցանած սերմերը չեն ընկնում ապառաժների ու ճանապարհների վրա, այլ սերմանվում են պարարտ հողում և կտան բազում հասկեր: Ձեր քրտնաջան, ձեր հոգատար աշխատանքը անպայմանորեն կտա իր բարի արդյունքը:

Վերստին շնորհակալություն եմ հայտնում Վեհափառ Հայրապետին, հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանությանը՝ իրենց եղբայրական վերաբերմունքի համար:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, ուսանողության անունից համբուրելու Ձերդ Սրբության Սուրբ Աջը և մաղթել Ձեզ բեղմնավոր նորանոր տարիներ»:

Կրկին ելույթ են ունենում հոգևոր ճեմարանի ուսանողները: Նրանք, ժողովրդական և եվրոպական երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի ղեկավարությամբ, կատարում են «Հայաստան» (խոսք՝ Պ. Սևակի, երաժշտ.՝ Էդ. Հովհաննիսյանի) և «Հայրենիքիս հետ» (խոսք՝ Հովհ. Թումանյանի, երաժշտ.՝ Ալ. Հարությունյանի) խմբերգերը:

Վահան Թեքեյանի «Հաշվեհարդար» բանաստեղծության արտասանությամբ հանդես է գալիս նախապատրաստական դասարանի ուսանող Վազգեն Պերպերյանը: Իսկ Գ դասարանի ուսանող Հովակիմ Քիլեճյանը դաշնամուրի վրա կատարում է Արամ Խաչատրյանի «Սոնատինո» ստեղծագործությունը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը ներկայացնում է տարեկան հաշվետու հետևյալ զեկուցումը.

Տ. ԵՂՆԻԿ ՔՀՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Վեհափառ Տեր, հարգարժան տիարք պրն. Պարսամյան և պրն. Հասրաթյան, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգելի դասախոսներ, սիրելի ուսանողներ և հարգելի ներկաներ:

Աստուծո ողորմությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ բոլորվեց Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1981—82 ուսումնական տարին:

Եվ այսօր հավաքվել ենք այստեղ, այս նվիրական հարկի տակ, ամփոփելու անցնող ուսումնական տարվա արդյունքները: Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ունի մի սրբազան պարտականություն Հայ Եկեղեցու առջև, այն է՝ պատրաստել ակնիվ, ուսյալ, ուղղամիտ և հավատավոր հոգևորականներ:

Հոգևոր ճեմարանում տարվող ուսումնա-դաստիարակչական աշխատանքները հիմ-

նականում կատարվում էին երեք ուղղությամբ:

ա. Հայագիտական և աստվածաբանական գիտելիքների դասավանդում:

բ. Ծիսական-եկեղեցագիտական-երաժշտական ուսուցում և հոգևոր-բարեսլաշտական դաստիարակություն:

գ. Մեր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նկատմամբ հայրենասիրության և քաղաքացիական պարտքի գիտակցության ներշնչում:

Անցյալ ուսումնական տարում հոգևոր ճեմարանը ուներ հետևյալ պատկերը՝

Ա. Տեսչական կազմ.

Տեսուչ՝ Եվնիկ քհն. Պետրոսյան.

Ուսմասվար՝ Հայկազուն աբեղա Նաջարյան.

Ընդհանուր դաստիարակ՝ Ստեփանոս վրդ. Չաքալյան.

Քարտուղար՝ Գարուշ սրկ. Լազարյան.

Վերակացուներ՝ Վարդգես սրկ. Մըկըրտչյան, Կառլեն սրկ. Պետրոսյան, Վաչագան Հովհաննիսյան.

Գրադարանավար՝ Հենրիկ Բալյան:

Բ. Ուսուցչական կազմ.

Ավելի քան քառորդ դար հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմի համար հայրական օգնություն ու մեծ պատիվ է այն հանգամանքը, որ ճեմարանի դասախոսական կազմը գլխավորում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Անցնող ուսումնական տարում հոգևոր ճեմարանի տեսչությունը դասախոսելու հրավիրեց վեց նոր դեմքերի՝ հանձինս Հայկազուն աբեղա Նաջարյանի, Եղիշե քհն. Բաղրամյանի, Նարեկ քհն. Մատարյանի, պարոնայք Խորեն Պալյանի, Նորիկ Գրիգորյանի և Արտաշես Բալաբանյանի:

Հոգևոր ճեմարանում իրենց ուսուցչական աշխատանքները շարունակեցին Եվնիկ քհն. Պետրոսյանը, Ստեփանոս վրդ. Չաքալյանը, Զատիկ աբեղա Ավետիքյանը, Արտակ քհն. Սիմոնյանը, Ղևոնդ քհն. Հարությունյանը, Սիմոն Գրքաշարյանը, Հովհաննես Թուիուլյանը, Երվանդ Մելքոնյանը, Արտաշես Մաթևոսյանը, Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբալյանը, Հայկ Ֆրունջյանը, Բաբկեն Ներսիսյանը, Սեդրակ Նահրյանը, Թադեոս Ասմարյանը և Ռուբեն Կարապետյանը:

Ուսանողությունը.

Հոգևոր ճեմարանը այս ուսումնական տարին սկսել է 50 ուսանողով: Այսօր տարին ավարտեցին 35 ուսանող: 15 ուսանողներ այս կամ այն պատճառով հեռացվել են ճեմարանից կամ ազատվել իրենց դիմումի համաձայն և կամ մեկնել զինվորական ծառայության:

Այսօրվա դրությամբ ուսանողների բաշխումը ըստ դասարանների հետևյալն է.

Գ լսարան — 7 ուսանող.

Ա լսարան — 12 ուսանող.

Գ դասարան — 9 ուսանող.

Նախապատրաստական դասարան — 7 ուսանող:

Ինչպես նկատելի է, այս տարի չունեցանք Բ լսարան:

Այս տարի հոգևոր ճեմարանը տալիս է իր հերթական հունձքը՝ 7 շրջանավարտներ, որոնք հետևյալներն են.

Ստեփան սրկ. Կարապետյան, Վարդան սրկ. Բաղդասարյան, Սմբատ սրկ. Արիստակեսյան, Ալեքսան սրկ. Թալայան, Վարդգես սրկ. Մկրտչյան, Գարուշ սրկ. Լազարյան և Կառլեն սրկ. Պետրոսյան:

Այս տարի ուսանողների ուսման մակարդակը զգալիորեն բարձրացել է՝ վերջին երկու տարիների համեմատությամբ: Բավական է նշել, որ ընդհանուր 550 քննական արդյունքներից միայն 8 վերաքննելի է արձանագրվել, իսկ 35 ուսանողների ընդհանուր միջինը մոտենում է 4 թվանշանին, այսինքն շուրջ 30% բարձր միջին մակարդակից: Այս, ինչ խոսք, ուրախացնում է մեզ: Այդ չի նշանակում սակայն, որ պետք է գոհանալ ձեռք բերվածով:

Երկար տարիներ, երբ խոսք է եղել ճեմարանում դասավանդվող առարկաների մակարդակի բարձրացման մասին, միշտ պատճառաբանվել է, որ մեր ուսանողները ի վիճակի չեն բարձր մակարդակի դասավանդումը ընկալելու: Տարբեր հարց է, թե որքան արդարացի է եղել այդ պատճառաբանությունը:

Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները

ունեն մի որոշ մակարդակ, և հույս ունենք, որ հետ այսու մեր ուսանողությունը ավելի ընտիր կլինի: Հետևաբար ժամանակն է, որ լրջորեն մտածենք նաև դասավանդվող առարկաների մասին: Մյուս կողմից, եթե նախորդ տարիներին հոգևոր ճեմարան կարող էին ընդունվել ութամյա կրթությամբ ուսանողներ, ապա վերջին տարին և հետ այսու ճեմարան կսրող են ընդունվել միայն միջնակարգ կրթությամբ: Հետևաբար մինչև այժմ գոյություն ունեցող ուսումնական ծրագիրը պետք է փոփոխվի և հարմարեցվի այսօրվա պահանջներին:

Մի կարևոր պակաս, որ ունի հոգևոր ճեմարանը՝ մասնագետ դասախոսների պակասն է: Այդ պակասի պատճառով էլ տեսչությունը ստիպված է եղել մի դասախոսի հանձնել մինչև 4—5 առարկայի դասավանդությունը և այդ պատճառով էլ տուժել է այդ առարկաների դասախոսության գործը, քանի որ մեր այս դարում մի անձ կարող է մի առարկայի մասնագետ լինել միայն: Այս դիտողությունը վերաբերում է ինչպես կրոնա-աստվածաբանական, այնպես էլ հայագիտական-ընդհանուր զարգացման առարկաների դասավանդությանը: Հետևաբար հոգևոր ճեմարանը, Վեհափառ Հայրապետի օրհնությունը առնելուց հետո, լրջորեն պետք է զբաղվի եկող ուսումնական տարում մի քանի մասնագետ դասախոսների հրավիրելու գործով: Միշտ պետք է նկատի ունենալ, որ համաձայն հոգևոր ճեմարանի կանոնադրական փաստաթղթերի, ճեմարանը համարվում է բարձրագույն աստվածաբանական ուսումնական հաստատություն: Հետևաբար պետք է ունենա համապատասխան բարձրությունը:

Եթե վերջին տասնամյակներում հայագիտական և հայերեն լեզվով ընդհանուր զարգացման առարկաների գծով ստեղծվել է մի հսկայածավալ գրականություն, ապա կրոնա-աստվածաբանական առարկաների վերաբերյալ կարելի է ասել ոչ մի հիմնական աշխատանք չի կատարվել ոչ Ս. Էջմիածնում և ոչ էլ սփյուռքի մեր նվիրապետական Աթոռներում և դպրեվանքներում: Հետևաբար զգալիորեն դժվարին, միաժամանակ պատասխանատու գործ է կրոնա-աստվածաբանական առարկաների դասավանդությունը: Այստեղ արդեն հոգևոր ճեմարանը պարտավոր է դառնալու ոչ միայն կրոնական, այլև գիտա-հետազոտական հաստատություն: Ուրախությամբ պետք է նշել, որ վերջին երկու տարիների ընթացքում լուրջ աշխատանքներ են տարվել այս ուղղությամբ, և եկող ուսումնական տարվա ընթացքում մենք կունենանք մի շարք լուրջ դասագրքեր, այդ թվում՝ Մարկոսի Ավետարանի մեկնություն (Հայկազուն աբեղա Նաջարյան), «Մարգարեներ» (Ստեփանոս վրդ. Չաքալյան), «Հայրաբանություն. Ոսկեդար» (Եղնիկ քհն. Պետրոսյան), «Շարականագիտություն» (Խորեն Պալյան) և այլն:

Անցնող ուսումնական տարում տեսչությունը լուրջ ուշադրություն է դարձրել ծիսագիտական առարկաների դասավանդությանը: Այդ ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա. հաստատվել և դասավանդվել են երեք նոր առարկաներ. գործնական ծիսագիտություն, ժամակարգություն և շարականագիտություն:

բ. Հոգևոր ճեմարանի դասախոսների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել է Արտակ քհն. Սիմոնյանի պատրաստած «Ընդհանուր ծիսագիտություն» առարկայի դասախոսությունների քննարկումը:

գ. Նկատի ունենալով, որ Մայր տաճարում ուսանողների թիվը յուրաքանչյուր դասում շուրջ 20 է, և փոքրերը ակտիվ կերպով չեն մասնակցում արարողություններին, հունվարից սկսյալ, Վեհափառ Հայրապետի թույլատվությամբ, առավոտյան ժամերգությունները դասարանական բաժնի ուսանողների համար կատարվել են մկրտարանում: Այս առթիվ պետք է շնորհակալական խոսք ասել Մայր տաճարի լուսարարապետ Հուսիկ արքեպ. Սանթուրյանին և մկրտարանի տեսուչ Արտակ քհն. Սիմոնյանին, որոնք սիրով տրամադրեցին մեկ մկրտարանը անհրաժեշտ ժամերին: Շնորհակալական խոսք պետք է ասել նաև Հայկազուն աբղ. Նաջարյանին, որ շատ սիստեմատիկ և պատասխանատու կերպով ղեկավարել է այդ ժամերգությունների անցկացումը: Արդյունքները չափազանց գոհացուցիչ են:

Հաշվետու վեկուցումից հետո արժանապատիվ տեր հայրը ընթերցում է հոգևոր ճեմարանի այն ուսանողների անունները, որոնց տեսչության կողմից շնորհվել էր տարվա լավագույն ուսանողների նվեր-մրցանակներ:

Վեհափառ Հայրապետից աջահամբույրով նվերներ են ստանում հետևյալ ուսանողները.

Գ լսարան

Ա մրցանակ — Վարդան սրկ. Բաղդասարյան.

Գարուշ սրկ. Լալարյան.

Բ մարցանակ — Սմբատ սրկ. Արիստակեսյան:

Ա լսարան

Ա մրցանակ — Մկրտիչ Ներսիսյան.

Բ մրցանակ — Գուրգեն Մարտիրոսյան:

Գ դասարան

Ա մրցանակ — Ռոբերտ Ադամյան.

Սամվել Կճոյան.

Բ մրցանակ — Միսակ Սարիբեկյան:

Նախապատրաստական դասարան

Ա մրցանակ — Սիմոն Առուշանյան.

Բ մրցանակ — Մանվել Մաթևոսյան:

Լավ վարքի համար — Սերժիկ Մանսուրյան:

Եկեղեցասիրության համար — Արա Հովհաննիսյան:

Թենիսի մրցումներում հաղթելու համար՝

Հովակիմ Քիլեճյան.

Ղևոնդ Կարապետյան:

Կոմիտասի անվան Գ մրցանակ — Հովակիմ Քիլեճյան:

Հանդիսության վերջում տեսուչ Տ. Եվնիկ քհն. Պետրոսյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ տալու Իր օրհնությունը հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԻՆ

(3 հունիս 1982 թ.)

Այսօր Մենք եկել ենք այստեղ՝ բերելու կրթական այս հարկին, տեսչության, դասախոսական կազմին և ուսանողության Մեր հայրական սիրո ողջույնը և օրհնությունը:

Տարին մի անգամ որոշ անհամբերությամբ սպասում ենք այս պահին, երբ ավարտվում է ուսումնական տարեշրջանը, և Մենք հանդիպում ենք մեր սիրելի դասախոսներին և ուսանողներին՝ նրաց աշխատանքների արդյունքը հաստատելու և գնահատելու համար:

Ահա մի տարեշրջան ևս իր ավարտին հասավ այսօր, և բոլորս այդ ուրախության պահը կապրինք:

«Զարկված հայրենիք, զրկված հայրենիք,
Ողբի հայրենիք, որբի հայրենիք»:

Քիչ առաջ լսեցինք մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի այս երգը, զարկված և զրկված, ողբի և որբի հայրենիքի մասին: Անցյալում ա՛յդ է եղած մեր ճակատագիրը դարեր շարունակ:

Գուցե ոմանք մտածեն, թե արդյոք կարիք կա՞ մեր տխուր անցյալը հիշել, քանի որ արդեն վաթսուն և ավելի տարիներից ի վեր հեռացել են այդ սև օրերը, և մենք ապրում ենք, ինչպես նույն Հովհ. Թումանյանն էր երազում այն ժամանակ՝ լույսի և հույսի արդի մեր հայրենիքում, ինչ որ մեր ազգային մեծագույն մխիթարությունն է անշուշտ:

Մենք կարծում ենք, որ առանց որևէ չափով տկարացնելու կամ ստվեր գցելու մեր այսօրվա լույսի և հույսի հայրենի իրականության վրա, անհրաժեշտ է երբեմն գոնե մեր հայացքը դարձնել դեպի մեր տխուր անցյալը և մի պահ հիշել, որ մեր ժողովուրդը իրոք ապրեց ողբերգական շատ ծանր պահեր: Մանավանդ 1915-ից սկսյալ մինչև 1918-ը և տակավին դրանից էլ հետո, քանի տարիներ, խորը կերպով զգացվում էին ծանր վերքերը մեր ժողովրդի: Հապար-հապար որբեր տակավին Երևանի փողոցներում թափառում էին այդ տարիներին անտեր ու անապաստան, մինչև որ մեր «զարկված ու զրկված, ողբի և որբի ժողովուրդը» կարողացավ հետզհետե ոտքի կանգնել և դիմել դեպի նոր և պայծառ իր ապագան՝ ստեղծված նոր, փրկարար իրադրությանց հետևանքով:

Մենք չենք մոռանում և պետք չէ մոռանանք մեր անցյալը, որպեսզի ուղիղ և արդար գնահատենք մեր ներկան ու արդար լինենք ներկա հայրենական իրողության նկատմամբ: Եվ տակավին ավելին՝ ակնկալում ենք, որ ամեն մեկս, իբրև հայ ազգի զավակներ, մեր պարտքը կատարենք լիությամբ՝ մեր նպաստը բերելու համար մեր հայրենական, ազգային հառաջդիմության և ծաղկումին:

Հայաստանյայց Եկեղեցին ոչ միայն հայ ժողովրդի հարազատ մեկ մասն է, այլ նա ինքը հայ ժողովուրդն է: Հայ Եկեղեցին ոչ միայն ազգը պահպանող ուժ եղած է մեր պատմության ընթացքում, այլ նաև ազգ ստեղծող: Մեր ժողովրդի պատմության հորի-

գոնի վրա մեր Մայր Եկեղեցին, ինչ որ հայ ժողովրդի կողքին կամ հայ ժողովրդի ծոցում առանձնացած մի հաստատություն չէ եղած, այլ միաձուլված է եղած ամբողջապես նրա մեջ, մեկ հոգի, մեկ մարմին դարձած: Մենք չենք կարող պատկերացնել մեր Եկեղեցին առանց հայ ազգի և առանց հայ հայրենիքի: Այսպիսի պայմանների մեջ մեր պարտքն է ո՛չ թե ինքնագովության արտահայտություններով տարվել, այլ զգալ մեր ուսերին ծանր պարտականությունը մեր հոգևոր առաքելության, մեր պարտքը ամբողջապես կատարելու մեր ժողովրդի ու հայրենիքի հառաջընթացի ճանապարհին:

Գալով մեր հոգևոր ճեմարանին, պետք է հաստատենք, թե նա այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մի կարևոր հաստատությունն է հանդիսանում, հոգևոր սպասավորների նոր սերունդներ պատրաստելու առաքելությամբ:

Արդյոք հոգևոր ճեմարանը կարողանո՞ւմ է լիությամբ իր այս պարտքը կատարել: Աշխատում է կատարել անշուշտ: Այսօր էլ այդ աշխատանքը շարունակվում է: Մենք անկեղծորեն գնահատում ենք և՛ տեսչությունը, և՛ տեսչության շուրջ հավաքված մի քանի երիտասարդ մեր միաբանները, և՛ մեր մասնագետ ավելի տարեց դասախոսները:

Անշուշտ որ մեր հոգևոր ճեմարանը տակավին չի հասած այն մակարդակին, որին մենք ձգտում ենք: Մենք գիտենք, թե նախկինում Գևորգյան ճեմարանը ինչպիսի կրոնագիտական, գրական և հայագիտական բարձր մակարդակի վրա էր գտնվում երկար տարիներ շարունակ և ինչպիսի սերունդներ, ուժեր նվիրեց մեր Եկեղեցուն, մեր գրականության և մեր հասարակական կյանքին, մեր քաղաքացիական հեղափոխական շարժումներին նույնիսկ:

Բնականաբար այսօր պայմանները փոխված են: Բարեբախտաբար այլևս քաղաքական կամ հասարակական կամ զուտ գրական և գիտական պարտականություններ իր վրա չեն ծանրանում: Երևանի գիտական, կրթական բազմաթիվ հաստատությունները արդեն ծաղկում են ապրում այդ տեսակետից, բայց զուտ հոգևոր, բարոյական և ազգային դաստիարակության տեսակետից մենք, կարծում ենք, պետք է նախանձախնդրություն ունենանք մոտենալու և հասնելու Գևորգյան ճեմարանի մակարդակին: Մենք լավատես ենք, հավատում ենք երիտասարդ ուժերին, որոնք գործում են հոգևոր ճեմարանի հարկի տակ այս վերջին մի քանի տարիներին հատկապես՝ գլխավորությամբ տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի:

Բնականաբար մեր հոգևոր ճեմարանի ամենատկար մասը ոչ թե դասախոսական կազմն է, ոչ թե այլ և այլ պայմաններն են, այլ, Մեր կարծիքով, գոհացուցիչ մակարդակի դասագրքեր չունենալն է: Այս ուղղությամբ վերջին տարիներին լուրջ աշխատանք կատարվեց և շարունակվում է կատարվել, որպեսզի մոտ ապագային ճեմարանը օժտվի մեր նպատակներին ծառայող դասագրքերով, հատուկ կերպով պատրաստված մեր դասախոսների ջանքերով:

Մենք քաջալերում ենք և գնահատում այս աշխատանքը, որ անպայման պետք է իր լրումին հասցնել:

Այս մի քանի մաղթանքներով կրկին Մեր շնորհավորանքը և գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի տեսուչ Տեր Հայր, Ձեզ, հարգարժան դասախոսներ, և Մեր օրհնությունը Ձեզ, սիրեցյալ ուսանողներ: Ցանկանում ենք, որ հառաջիկա երկու ամիսների հանգստից հետո վերստին ուրախությունը ունենանք մեր երկրի խաղաղության և ընդհանուր հառաջընթացի պայմանների մեջ վերաբանանք դռները հոգևոր ճեմարանի և նվիրվել նոր կրթական, դաստիարակչական գործունեության Սուրբ Հոգու ներշնչանքով ու շնորհներով առատ:

Թող Աստված մեզ միշտ լինի գործակից և օգնական, որպեսզի մեր բոլոր բարի, հոգեշեն ծրագիրները քայլ առ քայլ պսակվեն լիակատար հաջողությամբ, և Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանը դառնա այն կենդանի օջախը, այն կենսալի հոգևոր տունը, որտեղից պիտի ծլեն ու ծաղկեն մեր Սուրբ Եկեղեցու ապագա հոգևոր պինվորները:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով. ամէն»:

Ամավերջի հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻ

Սույն թվականի հունիսի 25—30 օրերին Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Վրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի հրավերով, այցելում է Թբիլիսի՝ տեղի հավատացյալ հայ ժողովրդին տանելով Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրական ողջույններն ու օրհնությունները:

Այս առթիվ սրբազան հորը ուղեկցում էր Մայր Աթոռի միաբան, «Էջմիածին» ամսագրի խմբագրության պատասխանատու քարտուղար Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը:

Հունիսի 25-ին, ուրբաթ օրը, կեսօրից հետո, Սիոն արքեպիսկոպոսը ժամանում է Թբիլիսի, որտեղ Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում դիմավորվում է Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի, քահանայից դասի, Գործադիր մարմնի նախագահ տիկին Ռուզաննա Մելքումյանի և այլոց կողմից:

Ժամը 16-ին առաջնորդարանի սրահում, ի պատիվ Սիոն սրբազանի, տրվում է բարիգալստյան ճաշկերույթ, որի ընթացքում Տ. Գևորգ եպիսկոպոսը, հանուն Վրահայոց թեմի հոգևոր դասի, վարչական մարմինների ու հավատացյալ ժողովրդի, ողջունում է սրբազան հոր ժամանումը Թբիլիսի:

Երեկոյան հյուրընկալները սրբազան հորը ծանոթացնում են Թբիլիսի քաղաքին ու նրա շրջակայքին:

Հունիսի 26-ին, շաբաթ օրը, ժամը 11-ին, Սիոն արքեպ. Մանուկյանը այցելում է Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ին և փոխանցում Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի եղբայրական ողջույնները:

Նորին Սրբություն Իլիա կաթողիկոսի և սրբազան հոր միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ հայ և վրաց քույր Եկեղեցիների բարեկամության մասին:

Այս առթիվ Սիոն արքեպիսկոպոսին ուղեկցում էին Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը և Տ. Հովհաննես ավագ քհն. Դանիելյանը:

Ընդունելությունից հետո վրաց կաթողիկոսանիստ Ս. Սիոն Մայր տաճարում, գլխավորությամբ Սիոն արքեպ. Մանուկյանի, տեղի է ունենում աղոթք՝ նվիրված համայն աշխարհի խաղաղության:

Ժամը 13-ին սրբազան հայրը այցելում է Վրաստանի պատմական թանգարան:

Երեկոյան ժամը 18-ին Տ. Սիոն արքեպիսկոպոսը թափորով և «Հրաշավառ»-ով առաջնորդվում է Հավլաբարի հայոց Ս. Էջմիածին եկեղեցի, ուր նախագահում է կիրակամտից ժամերգությանը:

Հավարտ ժամերգության սրբազան հայրը խոսում է քարոզ Ս. Էջմիածնի պատմական դերի վերաբերյալ և ներկա հավատացյալ ժողովրդին փոխանցում Ամենայն Հայոց կաթողիկոսի հայրական ջերմ ողջույններն ու օրհնությունը:

Հունիսի 27-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Տ. Սիոն արքեպիսկոպոսը «Հրաշավառ»-ով առաջնորդվում է հայոց Ս. Գևորգ Մայր եկեղեցի, որտեղ մատուցվում է ս. պատարագ:

Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ» բնաբանով քարոզ է խոսում Սիոն արքեպիսկոպոսը՝ վեր հանելով Մայր Աթոռի նախախնամական դերը:

Երեկոյան ժամը 17-ին սրբազան հայրը այցելում է Թբիլիսիի Հայ մշակույթի գործչների պանթեոն և «Հոգւոց» արտասանում հանգուցյալ մտավորականների հիշատակին:

Հունիսի 28-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, ուղեկցությամբ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի, Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանի և Տ. Հովհաննես քհն. Դանիելյանի, պաշտոնական այցելություն է տալիս Վրաստանի Կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Գիվի Մայսուրաձեին:

Սրբազան հոր և մեծահարգ նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ հայ և վրաց ժողովուրդների եղբայրական սերտ համագործակցության շուրջ:

Կեսօրից հետո Սիոն արքեպիսկոպոսը այցելում է Մցխեթայի Սվետիցխովելի (Ս. Կենդանարար) և Ջվարի (Ս. Խաչ) վրացական վանքերը և մոտիկից ծանոթանում տեղի կրոնա-եկեղեցական կյանքին:

Երեկոյան ժամը 17-ին «Իվերիա» հյուրանոցի պատվո հյուրերի սրահում, ի պատիվ Սիոն արքեպ. Մանուկյանի, տրվում է ողջերթի ճաշկերույթ՝ թեմական խորհրդի կողմից:

Ճաշկերույթին ներկա էր նաև Վրաստանի Կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Գիվի Մայսուրաձեն՝ իր երեք աշխատակիցների հետ:

Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսին բարի ճանապարհ են մաղթում Վրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Վրաստանի Կրոնական գործերի խորհրդի նախագահ տիար Գիվի Մայսուրաձեն, Գործադիր մարմնի նախագահ տիկին Ռուսլանա Մելքումյանը և ուրիշներ:

Վերջում աշխարհի խաղաղության մասին խոսում է Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ շեշտելով, թե Հայ Եկեղեցին ամեն օր աղոթում է «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»:

Ընդունելությունն անցնում է բարեկամական ջերմ մթնոլորտում:

Հունիսի 29-ին, երեքշաբթի օրը, ժամը 11-ին, սրբազան հայրը մեկնում է Ծղնեթ և ծանոթանում տեղի պատմական հուշարձաններին:

Հունիսի 30-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, Սիոն արքեպիսկոպոսը, շնորհակալություն հայտնելով Տ. Գևորգ եպս. Սերայդարյանին՝ նրա կազմակերպած ընդունելության համար, լավագույն տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԱՍԱՓՈՐԻ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄԸ ՄԱՅՐ ՀՈՂՈՒՄ

Կատարվեց մեծանուն հայրենասեր գրողի՝ Վիլյամ Սարոյանի վերջին իղձը՝ հետմահու ամփոփելու իր աճյունները հայրենի հարազատ հողի ծոցում, Արարատի նայվածքի ներքո:

Մայիսի 27-ին Վիլյամ Սարոյանի աճյունասափորը, Ֆրեզնոյի հայ համայնքի մասնավոր մի պատգամավորության ձեռամբ, բերվում է հայրենիք և հանդիսավոր իրադրության մեջ հանձնվում Հայ Գրողների Վարչությանը, որպեսզի նրա հայրենադարձ մասունքը հանգրվանվի հայրենի հողում, հայ մշակույթի և հայ մտավորականության մեծերի շարքում, Երևանում, Կոմիտասի անվան այգու հայկական պանթեոնում՝ հարևանությամբ Կոմիտաս վարդապետի, Շիրվանզադեի, Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Ալեքսանդր Թամանյանի, Արամ Խաչատրյանի և այլ մեծերի:

Մայիսի 29-ին, շաբաթ օրը, Երևանի Կոմիտասի անվան այգու հայկական պանթեոնում, Վիլյամ Սարոյանի աճյունասափորի՝ հայրենի հարազատ հողին հանձնելու սրտառուչ արարողությանը ներկա էին Հայաստանի կառավարության անդամներ, հայրենի մտավորականության, արվեստի և գիտության, ուսանողության և հասարակայնության բազմահազար ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում Վիլյամ Սարոյանին նվիրված բովանդակալից ճառերով հանդես են գալիս Հայկական ՍՍՀ գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանը, Երևանի № 116 դպրոցի ուսուցչուհի Ա. Մնացականյանը, «Արմինիեն օբսերվեր» թերթի խմբագիր Օ. Քեշիշյանը (ԱՄՆ): Բանաստեղծներ Գևորգ Էմինը և Ռաֆմիկ Դավոյանը կարդացին իրենց բանաստեղծությունները՝ ձոնված Վիլյամ Սարոյանի հիշատակին:

Հանուն Հայաստանի կառավարության Վ. Սարոյանի կյանքի և գրական վաստակի մասին բովանդակալից ճառով հանդես է գալիս Հայաստանի Կենտկոմի քարտուղար Կառլեն Դալլաքյանը:

Պանթեոնում տեղի ունեցող այս հանդի-

սության ժամանակ ոգեկոչվում է մեծավաստակ գրողի հիշատակը և վեր հանվում նրա բազմաժանր գրական ստեղծագործության համաշխարհային և հայկական նշանակությունը, որպես 20-րդ դարի աշխարհահռչակ գրական հսկաներից մեկի:

Հանգուցյալը, խոսելով իր ստեղծագործության պատկանելության մասին, նշել է. «Թեև անգլերեն եմ գրում և հակառակ այն բանի, որ ծնունդով ամերիկացի եմ, ես ինձ համարում եմ հայ գրող: Գործածածս խոսքերը անգլերեն են, միջավայրը, որի մասին գրում եմ՝ ամերիկյան է: Սակայն այն ոգին, որ ստիպում է ինձ գրել՝ հայկական է: Որեմն՝ ես հայ գրող եմ: Խորապես սիրում եմ հայ գրողների ընտանիքին պատկանելու պատիվը»:

Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունների սիրելի թեմաներն են եղել մարդասիրությունը, համամարդկային եղբայրությունը, ժողովուրդների բարեկամությունն ու լավատեսությունը մարդկության ապագայի նկատմամբ:

Նա խորապես մտահոգված է եղել աշխարհի ապագա բախտով և իր ազդեցիկ ձայնը բարձրացրել հանուն խաղաղության՝ ընդդեմ պատերազմի: «Մենք՝ գրողներս, որոնց ճանաչում և կարդում են ամենատարբեր երկրներում, մեր սրբազան պարտքն ենք համարում խաղաղության պահպանության համար հանդես գալը, քանի որ պատերազմը հավասարազոր կլիներ մարդկության ինքնասպանությանը»: «Ամենից շատ ատում եմ երեք բան՝ վատությունը, դավաճանությունը, պատերազմի և բռնության պրոպագանդան»:

Նա իր սեփական ժողովրդի անցյալի արյունոտ պատմության կենսափորձով գիտեր, որ պատերազմը, մանավանդ հայ ժողովրդի նման փոքրաքանակ ժողովրդի համար, մեծագույն չարիքն է: Այդ մտածումով նա, որ պես ճշմարիտ հայ մարդ, խորունկ և ճշմարիտ հոգեկան հրճվանք էր ապրում ի տես իր ժողովրդի ազգային վերածննդյան: Նա երբեք «չի կորցրել հոգեբանական ու արտակցական կապը իր ակունքների հետ»: Նրա ողջ ստեղծագործությունը տոգորված է եղել հայկականությամբ:

Վիլյամ Սարոյանը իր ողջ ստեղծագործական վաստակով, իր ապրած կյանքով մարմնացումն է հանդիսացել իր ժողովրդի իմաստության, բարոյական նկարագրի և հերոսական ոգու: «Ես հավատում եմ մարդու բարությանը: Ատում եմ այն ուժերը, որ աշխատում են բնաջնջել մարդու ավնվությունը»:

Նա որքան աշխարհինն էր, մարդկությանը, նույնքան և իր ժողովրդինը:

Սարոյանի ստեղծագործության հավատո հանգանակը արտահայտվել է նրա հետևյալ խոսքերի մեջ. «Փնտրիր բարին ամենուրեք և երբ գտնես, դուրս բեր թաքստոցից, և թող նա լինի ապատ ու աներկյուղ... Արթնացրու առաքինությունը, ում սրտում էլ որ նա գաղտնի և տրտում թաքնվելիս լինի աշխարհի սարսափներից ու ամոթից... Եվ քանի դեռ ապրում ես... ոչ մի բան չավելցնես աշխարհի աղետներին ու տխրությանը, այլ ժըպտա՛ կյանքի անծայր ցնծության ու խորհրդի հանդեպ»:

Սգո միտինգի ավարտին Վիլյամ Սարոյանի աճյունասափորը թափորով տարվում է դեպի գերեզմանատուն և սգո մեղեդիների ներքո իջեցվում է գերեզման, որը ծածկվում է բազում պսակներով: Հայրենի հողը հարըստացավ իր արժանավոր մի զավակի մասունքով:

Վիլյամ Սարոյանը նաև անձնական ու սիրելի բարեկամն էր Հայոց Հայրապետի, հարազատ և հավատավոր զավակը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ամեն անգամ երբ նա լինում էր մայր հայրենիքում, անպատճառ ուխտի էր գալիս Ս. Էջմիածին և սիրալիր զրույց ունենում Հայոց Հայրապետի հետ՝ իրեն հետաքրքրող ազգային-եկեղեցական, հայրենասիրական ու մշակութային հարցերի շուրջ:

Հանգի՛ստ իր հոգուն: Փա՛ռք իր անկորընչելի վաստակին:

Ա. Հ.



ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԱՅԳՈՒ ԱՐԵՎԱՀԱՄ ՄՐԳԵՐՈՎ

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱԶԱՏ ՀՈՂՈՒՄ՝ ՄԱՍԻՍՆԵՐԻ ՀԱՅԱՑՔԻ ՏԱԿ



ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 7-ին հոգևոր ճեմարանի հանդիսության սրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ Տ. Գարեգին աբդ. Ներսիսյանի և Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանի վարդապետական ավարտաճառի բանավոր պաշտպանության հանդիսությունը:

Նախագահական սեղանի շուրջ, Հայոց Հայրապետի կողքին, տեղ են գրավել Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Զավեն, Տ. Ղևոնդ արքեպիսկոպոսները:

Հանդիսությանը ներկա են նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու այլ հրավիրյալներ:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ նախապես նշանակվել էր ավարտաճառերի քննության հանձնաժողով, որի կազմում էին, որպես անդամներ, Տ. Արսեն եպս. Բերբերյանը, պրն. Հայկ Մելքոնյանը և պրն. Պարգև Շահբազյանը, որոնք առանձինն ու հանգամանորեն քննել էին ավարտաճառերը և իրենց գնահատականներն ու դիտողությունները գրավոր կերպով ներկայացրել Վեհափառ Հայրապետին:

Քննիչ հանձնաժողովը ավարտաճառերի գրավոր պաշտպանությունը գնահատել էր «գերազանց» և խնդրել Հայոց Հայրապետին՝ թույլ տալ դիսերտանտներին մայիսի 7-ին հանդես գալու հրապարակայնորեն իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ:

Տ. Գարեգին աբդ. Ներսիսյանի վարդապետական ավարտաճառի թեման էր «Պողոսագիտությունը այսօր»:

Աշխատությունը բաղկանում էր 60 մեքենագրված էջերից, չորս գլխավոր բաժանումներից և ինը ենթաբաժիններից:

Սույն աշխատությունը ընթերցողին ծանոթացնում է «Արևմուտքի պողոսագետ աստվածաբանների եզրահանգումներին և այլ որոնումներին, որոնք դեռ այսօր էլ շարունակվում են այդ ասպարեզում», նշում է հեղինակը:

Քննիչ հանձնաժողովը իր զեկուցագրում նշում է, որ «հեղինակը իր առաջ դրած խնդիրը հաջողությամբ է կատարել», օգտագործել է մանավանդ գերմաներեն լեզվով գրված 23 անուն աղբյուրները:

Հեղինակը հաջողությամբ ներկայացրել է Պողոս առաքյալի կենսագրությունը՝ օգտագործելով նաև պողոսյան թղթերի կենսագրական տվյալները: Հետաքրքիր են Պողոս առաքյալի դարձի մանրամասնությունները, որտեղ օգտագործվել են բժիշկների, պատմաբանների, հոգեբանների գիտական ուսումնասիրությունները:

Ներկայացված աշխատության շարադրանքը կուռ է, մտքերը ձևակերպված են հստակ, լեզուն ընդհանրապես հարթ է, շարահյուսորեն ճկուն, թեև տեղ-տեղ կան առանձին աննշան սխալներ:

Քննիչ հանձնաժողովը Տ. Գարեգին աբեղայի սույն աշխատությունը «գերազանց» է գնահատում և խնդրում է Հայոց Հայրապետին՝ թույլ տալ նրան հանդես գալ իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:

Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանի ավարտաճառի թեման «Եսենյանները և Քումրանի համայնքի կանոնը» ուսումնասիրությունն է:

Աշխատությունը բաղկանում է 41 մեքենագրված էջերից: Ունի ներածական բաժին և վեց ենթագլուխներ: Աշխատությանը կցված է նաև մի հատված՝ որպես վերջաբան:

Տ. Ստեփանոս աբեղայի աշխատությունը

առաջին հաջող և գիտական ուսումնասիրությունն է քումրանագիտության մասին:

Նյութը չափազանց հետաքրքրական է և քրիստոնեության ծագման պատմությամբ զբաղվող հայ բանասերների համար ունի սկզբնաղբյուրի նշանակություն:

Ուսումնասիրության լեզուն սահուն է, հարթ ու հստակ, շարադրանքի կառուցվածքը՝ կոռ: Սույն ուսումնասիրության մեջ ևս կան շարահյուսական անհարթություններ:

Քննիչ հանձնաժողովը հույս է հայտնում, որ ուսումնասիրողը իր շահեկան սույն աշխատանքը հետագայում կամբողջացնի, որպես քումրանագիտությանը նվիրված գիտական աշխատություն:

Աշխատության մեջ համառոտակի ներկայացվել է քումրանյան ձեռագրերի հայտնաբերման ճշգրիտ պատմությունը, որի մեջ հեղինակը նշում է, որ հայտնաբերված այդ փաստաթղթերը պատկանել են «Եսենյան» կոչված հրեական մի աղանդի, ըստ հրեա պատմիչ Հովսեփիոս Փլավիոսի, Փիլոն Ալեքսանդրացու և Պլենիուս Երեցի հաղորդած վկայությունների: Վերոհիշյալ վկայությունների ճշմարտացիությունը հաստատվում է Քումրանի ձեռագրերում պահպանված փաստերով:

Եսենյանների ստեղծած աղանդավորական սույն համայնքը հակադրվում էր այդ ժամանակ գոյություն ունեցող ստրկատիրական կարգերին և հաստատված օրենքներին: Եսենյանները դատապարտում էին ստրկատիրական կարգերը և դրա փոխարեն առաջ էին քաշում բոլորի համար պարտադիր աշխատանքի սկզբունքը: Այդ աղանդի հիմնական դրույթներից մեկն էր համայնական գույքի և համայնական ունեցվածքի սկզբունքը:

Ուսումնասիրության մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Քումրանի համայնքի կանոնադրությունը: Աղանդը իր փիլիսոփայությունը հիմնել էր երկվության (դուալիզմ) գաղափարի վրա, այսինքն լույսի և խավարի, չարի ու բարու, Աստծու և սատանայի գոյության և պայքարի վրա:

Աշխատության մեջ հարևանցիորեն խոսվում է քրիստոնեության և եսենյանների միջև գոյություն ունեցող որոշ հասկացողությունների մասին: Տ. Ստեփանոս աբեղան իր ուսումնասիրության մեջ նշում է, որ «գուցե եսենյանների կանոնների ինչ-որ ազդեցություն հնարավոր լիներ գտնել հետագա դարերում ստեղծված քրիստոնեական վանական կազմակերպությունների կանոնադրությունների վրա»: Բայց այս մասին առաջ չեն բերված փաստացի վկայություններ:

Քննիչ հանձնաժողովը ներկայացված սույն աշխատությունը գնահատում է նույնպես «գերազանց», «իր բնույթով նոր, ներկայացված է գիտական բավարար հիմնավորումով», և խնդրում է Հայոց Հայրապետին՝ թույլ տալ Տ. Ստեփանոս աբեղային հանդես գալու իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:

Քննիչ հանձնաժողովը այնուհետև հրավիրում է Տ. Գարեգին և Տ. Ստեփանոս աբեղաներին՝ հանդես գալու իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ:

Տ. Գարեգին և Տ. Ստեփանոս աբեղաները համառոտակի խոսում են իրենց թեզերի ընտրության, օգտագործած աղբյուրների մասին և վերջում պատասխանում քննիչ հանձնաժողովի տված հարցերին:

Քննիչ հանձնաժողովը երկու ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը գնահատում է «գերազանց»:

Այնուհետև Տ. Արսեն եպս. Բերբերյանը, հանուն քննիչ հանձնաժողովի, հրավիրում է Հայոց Հայրապետին՝ Իր օրհնության խոսքը ասելու:

Հայոց Հայրապետը ջերմորեն շնորհավորում է Տ. Գարեգին և Տ. Ստեփանոս աբեղաների վարդապետական ավարտաճառերի հաջող պաշտպանությունը և իր սրտի ուրախությունն է հայտնում, որ Մայր Աթոռի երիտասարդ միաբանները հանդես են գալիս նման արժեքավոր ուսումնասիրություններով և շարունակում Մայր Աթոռի երբեմնի գիտուն միաբանների գրական-ստեղծագործական ավանդությունը:

Հրամանավ Վեհափառ Հայրապետի, մայիսի 9-ին Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում Տ. Արսեն եպս. Բերբերյանը, համաձայն Ձեռնադրության Մաշտոցի, Տ. Գարեգին և Տ. Ստեփանոս աբեղաներին շնորհում է մասնավոր վարդապետական իշխանության չորս աստիճաններ:

Վերջում Տ. Արսեն եպիսկոպոսը հանդես է գալիս Հայ Եկեղեցում վարդապետական աստիճանի տվչության կարևորությանը նվիրված խրատականով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորապսակ Տ. Գարեգին և Տ. Ստեփանոս վարդապետներին և նրանց բարեմաղթում նորանոր հաջողություններ, իրենց ապագա հոգևոր ծառայության պատասխանատու ասպարեզում:

Բոլոր Եկեղեցիներ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏՐԻԵՍՏԵՈՒՄ

Հարավային Եվրոպայի և Դանուբյան շրջանի համար ԵՀԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպված Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպումը, որը տեղի է ունեցել սույն թվականի հունիսի 6—11 օրերին Տրիեստեում և որը անց է կացվել «Մարդու իրավունքների գծով Եկեղեցիների ծրագրի» գործադրման շրջանակում, քննարկման առարկա է դարձել հետևյալ թեման. «Մարդու իրավունքներ — արդարության և վստահության հարաբերություններ»:

Հանդիպմանը մասնակցել են քրիստոնեական տարբեր դավանանքներ պատկանող Եկեղեցիների ավելի քան 40 ներկայացուցիչներ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ներկայացրել է Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Ներսես եպիսկոպոս Պուլապալյանը:

Քննարկվող թեմայի կենտրոնական հարցի շուրջ ներածական ընդհանուր զեկուցումով հանդես է եկել պաստոր Տ. Շուին՝ իր զեկուցման առանցքը դարձնելով Եկեղեցիների առաքելությունը մարդու իրավունքների բնագավառում:

Խորհրդակցության ընթացքում ներկայացվել են նաև հարակից մի շարք զեկուցումներ հետևյալ թեմաներով.

ա. «Լարվածության թուլացումն ու խաղաղությունը որպես էական պայմաններ մարդու իրավունքների գործադրման համար» (զեկուցող՝ Ադալբերտ Կրիմս):

բ. «Մարդու իրավունքների գործադրման վերաբերյալ ժամանակակից հարցեր» (զեկուցող՝ Լավլո Մակկայ):

գ. «Մարդու իրավունքները և տնտեսական ու ընկերային արդարությունը» (զեկուցող՝ Լուիս Մուարա):

դ. Աստվածաշնչական և աստվածաբանական խորհրդածություն վստահության հարաբերությունների մասին (զեկուցող՝ պաստոր Ջիաննա Սիկլոնե):

Ընթերցված զեկուցումների շուրջ մտքերի լայն փոխանակումներից հետո, խորհրդակցության մասնակիցների կողմից որդեգրվեցին հետևյալ եզրակացությունները.

ա. Աստվածաբանական մոտեցում.

բ. Վստահություն.

գ. Ժողովուրդների իրավունքներ, այդ

թվում՝ գաղթականների, փոքրամասնությունների և կանանց իրավունքներ.

դ. Եկեղեցիների առաջադրանքը՝ նպաստել Հելսինկիի ժողովի վերջնական ակտի գործադրմանը:

Խորհրդակցությունում նշվեց, որ քրիստոնյաները կարիք չունեն մշակելու ինչ-որ մի նոր աստվածաբանություն՝ մարդու իրավունքների վերաբերյալ, այլ իրենց աստվածաբանությունները պետք է վերանայեն՝ մեկնակետ ունենալով բոլոր մարդկանց կողմից մղվող պայքարը իրենց իրավունքների պաշտպանության համար: Խորհրդակցության ամբողջ ընթացքում ինչպես վեկուցողների, այնպես էլ ելույթ ունեցողների համար բնաբան ծառայեց Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «Չիք խտրություն ո՛չ հրեայի, ո՛չ հեթանոսի, ո՛չ ստրուկի, ո՛չ ազատ մարդու, ո՛չ տղամարդու և ո՛չ կնոջ միջև»:

Խորհրդակցությունը նշեց նաև, որ քրիստոնյաները պետք է կորաշարժի ենթարկեն իրենց ուժերը՝ մարդկանց և պետությունների միջև փոխադարձ վստահություն հաստատելու համար: Իսկ դրա համար հարկավոր է մի նոր ստրատեգիա՝ ավելի լավ ճանաչել և ավելի լավ հասկանալ միմյանց:

Ինչ վերաբերում է մարդու և ժողովուրդների իրավունքներին, հանդիպման մասնակիցները արձանագրեցին, որ խաղաղության դեմ սպառնալիքներին և խելացնոր սպառազինություններին պետք է հակադրել մարդկային իրավունքների պաշտպանության ավելի հզոր մի ստրատեգիա: Խորհրդակցության կողմից ընդունված փաստաթղթում նշվել է. «Խաղաղությունը մարդու իրավունքների գործադրման պայմանը չէ, այլ ինքը մարդկային մի իրավունք է: Եթե անհնար է դառնում ապահովել խաղաղությունը, եթե անհնար է երաշխավորել ընկերային ավելի արդարություն, ապա ավելորդ կդառնա խոսել մարդու իրավունքների մասին... Եկեղեցին պետք է կանգնի ճնշվածների, ձայնազուրկների, իրավազուրկների, իշխանություն չունեցողների կողմը: Եկեղեցու հավատարմությունը պետությանը կանգ է առնում այն պահին, երբ պետությունը դադարում է ժողովրդին ծառայելուց»:

Հելսինկիի ժողովի վերջնական ակտի գործադրման ի նպաստ Եկեղեցիների առաջադրանքի կապակցությամբ հանդիպման մասնակիցները ընդունեցին հետևյալ որոշումը. «Տրված լինելով, որ ավելի ու ավելի որոշ է դառնում, որ Հելսինկիի համաձայնագրերը, ինչպես նաև միջազգային օրգանիզմներից բխող այլ հանձնարարություններ մընում են որպես մեռյալ տառ և պետությունների պատասխանատու ղեկավարներ չեն ձգտում դրանք գործադրել, Եկեղեցու առաջադրանքներից մեկը պետք է լինի, վստահության հարաբերությունների որոնման իր ճանապարհին, մտածել և գտնել վերոհիշյալ համաձայնագրերի և հանձնարարությունների գործադրմանը հատուկ գործնական միջոցներ»:

Խորհրդակցության ավարտին հանդիպման մասնակիցները անհրաժեշտ և նպատակահարմար համարեցին առաջիկայում կազմակերպել միջերկրականյան երկրների էկումենիկ մի կոնֆերանս՝ շարունակելու համար վերոհիշյալ թեմայի շուրջ դիալոգը նաև մահմեդական համայնքների ներկայացուցիչների հետ:

Խորհրդակցության առաջին օրը, հունիսի 7-ի երեկոյան, Տրիեստե քաղաքի Ավետարանական Եկեղեցում տեղի ունեցավ էկումենիկ մի արարողություն՝ ժողովի մասնակիցների և հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ: Էկումենիկ սույն արարողության ընթացքում «Արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից» բնաբանով անգլերեն լեզվով քարոզեց Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԻԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

Սույն թվականի հունիսի 22—30 օրերին Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում տեղի ունեցավ միջեկեղեցական խորհրդակցություն, որի բնաբանն էր «Ճշմարիտ վարգացումը կյանքի լիության համար՝ համաձայն ուղղափառ Եկեղեցու մոտեցման»: Սույն խորհրդակցությունը կազմակերպված էր ԵՀԽ-ի «Զարգացման նպաստող հանձնաժողովի» կողմից:

Խորհրդակցությանը մասնակցում էին ուղղափառ և արևելյան տարբեր Եկեղեցիների շուրջ 60 ներկայացուցիչներ: Մայր Աթոռի կողմից հանդիպմանը մասնակցում էր Տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ժողովի սկզբին ներկաները ունկնդրեցին Տ. Պիմեն Պատրիարքի ողջույնի խոսքը:

Խորհրդակցությունում գլխավոր վեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի վերոհիշյալ հանձնաժողովի տնօրեն դոկտ. Խուլիո դե Սանտա Անան: Նրա վեկուցման թեման էր՝ «ԵՀԽ-ի վեցերորդ համաժողովը, վարգացման նըպաստող հանձնաժողովի դերը և ուղղափառ Եկեղեցու մասնակցությունը»:

Խորհրդակցությունում լսվեցին նաև մի շարք վեկուցումներ: «Զարգացումը և ուղղափառ աստվածաբանությունը» թեմայով հանդես եկավ Կ. Պոլսի հունաց Պատրիարքի ներկայացուցիչը:

Վրաց Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչը վեկուցեց «Ուղղափառ Եկեղեցու մակրոդիակոնիկ ծառայությունը հանուն ճշմարտության և վարգացման» թեմայի մասին:

Հիշյալ վեկուցումների շուրջ տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակում: Մտքերի փոխանակություն տեղի ունեցավ նաև «ժամանակակից համաշխարհային իրադրության վերաբերող կոչերը և Եկեղեցիների պարտականությունը» թեմայով:

Խորհրդակցությունը վբաղվեց նաև «Ուղղափառ Եկեղեցու մասնակցությունը վարգացման նպաստող հանձնաժողովի աշխատանքներում, միջեկեղեցական հարցերում և ԵՀԽ-ի վեցերորդ համաժողովում» թեմայով:

Ժողովի վերջում խմբագրվեց համապատասխան մի հաղորդագրություն:

Խորհրդակցության մասնակիցները կազմեցին նաև մի հեռագիր՝ ուղղված Եկեղեցիների պետերին և ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար Ֆիլիպ Փոթըրին:

Խորհրդակցության ավարտից հետո մասնակիցները ծանոթացան Կիև քաղաքի ու նրա շրջակայքի վանքերին, եկեղեցիներին ու տեսարժան վայրերին:



ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

1982 թվականի հունիսի 8—11-ը Բուդապեշտում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ Արևելյան Եվրոպայի Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպումը ԵՀԽ-ի ղեկավարության հետ:

Հանդիպումը մի կարևոր քայլ էր 1983 թվականին Վանկուվերում (Կանադա) կայանալիք ԵՀԽ-ի Զ համաժողովի պատրաստման ճանապարհին:

Հանդիպումը կազմակերպվել էր ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի կողմից:

Այն տեղի ունեցավ Բուդապեշտում Հունգարիայի Եկեղեցիների էկումենիկ խորհրդի հրավերով:

Հանդիպմանը մասնակցում էին Արևելյան Եվրոպայի 8 երկրների 25 Եկեղեցիների 57 պատգամավորներ, այդ թվում՝ ՍՍՀՄ-ում գործող հետևյալ Եկեղեցիների պատվիրակությունները. Ռուս Պրավոսլավ Եկեղեցի, Հայ Առաքելական Եկեղեցի, Վրաց Օրթոդոքս Եկեղեցի, Լատվիայի Լութերական Եկեղեցի, Էստոնիայի Լութերական Եկեղեցի և Բապտիստների Եկեղեցի:

Խորհրդակցությունները տեղի ունեցան Բուդապեշտի Մարգարիտ կղզում գտնվող «Գրանդ Հոթել» հյուրանոցի դահլիճում:

Հանդիպումն սկսվեց հունիսի 8-ին էկումենիկ աղոթքով: Ապա բաղիգալստյան, ողջույնի և բացման խոսքով հանդես եկավ Հունգարիայի Եկեղեցիների էկումենիկ խորհրդի նախագահ դոկտ. Տիբոր Բարթան:

Այնուհետև վեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի պատվիրակության ղեկավար դոկտ. Կոնրադ Ռայսերը: Նա խոսեց հիմնականում երեք հարցերի մասին՝ ըստ հետևյալի.

ա. Բուդապեշտի այս հանդիպման նպատակը.

բ. Վանկուվերի համաժողովի հիմնական թեման, որ է՝ «Հիսուս Քրիստոս՝ աշխարհի կյանքը», և այդ թեմային առնչվող հետևյալ չորս ենթաթեմաները.

1. Կյանքը իբրև Աստուծո պարգև.
2. Կյանքը մահվան սպառնալիքի տակ.
3. Կյանքը իր ամբողջությամբ.
4. Կյանքը իբրև համամարդկային ներդաշնակություն:

Բացի հիմնական թեմայից և ենթաթեմաներից, Վանկուվերում պիտի քննարկվեն նաև ԵՀԽ-ի գործունեությունը և այդ գործունեության արդյունքները Նայրոբիից մինչև Վանկուվեր: Այդ քննարկումները կատարվելու են 8 հարցերի շրջանակում:

գ. ԵՀԽ-ն ոչ միայն համատեղ աղոթքի համար է, այլ նաև Եկեղեցիների միջև փոխօգնության և համագործակցության, համատեղ պայքարի ինչպես Եկեղեցիների միության, այնպես էլ արդար մի հասարակության ստեղծման համար:

Դոկտ. Կոնրադ Ռայսերի խոսքից հետո ընտրվում է մի նախագահություն՝ Բուդապեշտի սույն հանդիպումը ղեկավարելու համար:

Հունիսի 8-ի երեկոյան հանդիպման ըն-

թացքում նախագահական կազմը ընտրում է խմբագրական մի մարմին:

Հաջորդ օրը, հունիսի 9-ին, տեղի ունեցավ չորս նիստ:

Ա նիստի ընթացքում ընթերցվեցին երկու զեկուցումներ՝ Չեխոսլովակիայի Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ դոկտ., պրոֆ. Սմոլեկի և Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Անտոնիի կողմից: Երկու զեկուցումներն էլ նվիրված էին Վանկուվերի համագումարի ենթաթեմաներին և ներկայացնում էին այդ խնդիրների վերաբերյալ իրենց Եկեղեցիների տեսակետները:

Բ նիստի ընթացքում քննարկվեցին դոկտ. Կոնրադ Ռայզերի, դոկտ., պրոֆ. Սմալեկի և միտրոպոլիտ Անտոնիի զեկուցումները:

Գ նիստի ընթացքում ընթերցվեցին ևս երկու զեկուցում նույն թեմաներով, Ռուս Եկեղեցու պատվիրակության ղեկավար, Կիևի միտրոպոլիտ Ֆիլարետի և ԳԴՀ-ի Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ Իոակիմ Յագեյի կողմից:

Դ նիստի ընթացքում տեղի ունեցավ վերոհիշյալ երկու զեկուցումների քննարկումը:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, «Գրանդ Հոթել»-ի պարտեզ-ռեստորանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին ներկա գտնվեց նաև Հունգարիայի պետական քարտուղար, Հունգարիայի Եկեղեցական գործերի խորհրդի նախագահ պրն. Իմրե Միկլոշը:

Հունիսի 10-ին տեղի ունեցավ հինգ նիստ:

Ա նիստի ընթացքում նախ պարտականություն դրվեց խմբագրական մարմնի վրա՝ պատրաստելու երկու գրություն՝ հանդիպման կոմյունիկեն և մի հուշագիր՝ ուղղված ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթրին:

Ապա «Նայրոբիից Վանկուվեր» թեմայի շուրջ զեկուցեց ԵՀԽ-ի ներկայացուցիչ դոկտ. Թոդոր Սաբեևը:

Բ նիստի ընթացքում ԵՀԽ-ի ներկայացուցիչներ դոկտ. Ուլրիխ Բեքերը և Էրիխ Ուայնգարթերը մանրամասն զեկուցումներ ներկայացրին Վանկուվերի համաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին:

Բազմածավալ այս աշխատանքների մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն երեք հանդիպումներ.

1. ԵՀԽ-ի անդամ Եվրոպայի Եկեղեցիների նախապատրաստական հանդիպումը Ավստրիայում 1983 թվականի փետրվարին:

2. Վանկուվերի պատգամավոր երիտասարդ ներկայացուցիչների հանդիպումը Վանկուվերում:

3. Վանկուվերի կին պատգամավորների հանդիպումը Վանկուվերում:

Գ և Դ նիստերի ընթացքում տեղի ունեցավ վերոհիշյալ երկու զեկուցումների քննարկումը:

Ե նիստի ընթացքում ընթերցվեցին երեք զեկուցումներ՝ ԵՀԽ-ի ծրագրով համապատասխանաբար դեպի Ավստրիա, Բուլղարիա և Կուբա կատարած այցելությունների մասին:

Հանդիպման վերջին օրը, հունիսի 11-ին, տեղի ունեցավ երկու նիստ:

Ա նիստի ընթացքում ընթերցվեց և քննարկման դրվեց հանդիպման կոմյունիկեի տեքստը:

Բ նիստի ընթացքում քննարկվեց և հաստատվեց դոկտ. Ֆիլիպ Փոթրին ուղղված հուշագրի տեքստը:

Վերջում, ծրագրից դուրս, Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին ընթերցեց Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի ղեկավարության հայտարարությունը Իսրայելի՝ դեպի Լիբանան կատարած ներխուժման դեմ:

Հանդիպումը փակվեց էկումենիկ աղոթքով:

Բուդապեշտի սույն հանդիպման աշխատանքներին, որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ, մասնակցեց Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ արժ. Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանը:



ԷԴՎԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ*

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԶԱՆԳԵՐԸ

Ողբերգության պես ու սուրբ հավատի
Զանգերն են հնչում Սարդարապատի:

Ասես մարդկային արցունքները ջինջ
Խտացել այստեղ, դարձել են պղինձ:

Խտացել այստեղ, փոխվել են երգի
Ժամանակի մեջ ու տիեզերքի:

Ողբերգության պես ու սուրբ հավատի
Զանգերն են հնչում Սարդարապատի:

Արարատ լեռան հայացքի տակ ծեր
Բիրտ յաթաղանն էր վայրի շառաչում...
Բայց բարբարոսը, ոչ, չէր հասկացել,
Որ վերքերից են վարդերը աճում.

Մի բուռ հայ մնաց և ահեղ մի ցավ,
Մի բուռ հայ մնաց և ոխ մի շաչուն...

Բայց մարդասպանը, ոչ, չհասկացավ,
Որ վերքերից են վարդերը աճում:

Եվ արնոտ հողում Սարդարապատի
Բռնկվեց կռվի վարդը սրբական...
Եվ դահիճներն այն նենգ ու տմարդի
Զարմանքով հանկարծ այդ վարդը տեսան...

Տեսան վարդն ահեղ ու սարսափելի,
Որ արցունքից ու բոցից էր աճում...

Եվ նա, ով մահն էր բերում հայերի,
Ինքը գալարվեց մահվան սև ճահճում:

Ապգասպանության ահավոր հնձից
Փրկվեց արնաքամ մի բուռ հայություն,
Արարատ լեռան կորավոր շնչից
Նա ոգի առավ, առավ հարություն:

Ես անիծում եմ եղեռն ու նախճիր,
Ես անիծում եմ գործերը մահվան,
Փառաբանում եմ այս վարդերը հիր
Եվ այս զանգերը վերածնության...

Զանգերն են զնգում
Սարդարապատի...

Պղնձե զանգը
Նման է վարդի...

Սև գործերի դեմ՝
Լուսավոր զանգեր...

Հանգեր են ասես,
Երգի,

Հավատի,
Հարության հանգեր...

Սարդարապատում
Հնչում են զանգեր...

Թարգմ. ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ

---

* Էստոնացի հանրածանոթ բանաստեղծ, հայ մշակույթի և հայ ժողովրդի պատմությանը քաջածանոթ, ինչպես նաև անկեղծ բարեկամը մեր ժողովրդի և նրա վերածնված հայրենիքի:



ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԸ

«Զինչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին» (Եբր. ԺԱ 1):

«Ի՞նչ է հավատքը, եթե ոչ հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում»:

Ամեն տարի հանդիսությամբ Հայաստանյայց Եկեղեցին տոնում է Քրիստոսի հրաշափառ Համբարձման հիշատակը: Քրիստոս իր հարությունից հետո, քառասուն օր շրջեց երկրի վրա, հաճախ երևաց իր առաքյալներին ու բազում հավատացյալների, պատգամներ տվեց նրանց և ապա, բարձրանալով Ձիթենյաց լեռը, վերջին անգամ օրհնեց իր աշակերտներին ու իր արյամբ փրկված աշխարհը, և իր սուրբ մարմնով բարձրացավ երկինք ու ծածկվեց մարդկային բնական տեսողությունից, բարձրացավ՝ նորից միանալու հավերժին, անսահմանությանը, այնտեղ, որտեղից եկել էր:

Մարդկային բանականությունը անկարող է իրեն ծանոթ բնական օրենքների սահմանում բացատրել Քրիստոսի ո՛չ ծնունդը, ո՛չ հարությունը և ո՛չ էլ համբարձումը: Ու ահա այստեղ է, որ օգնելու է գալիս քրիստոնեական հավատքը, որով և ըմբռնելի է դառնում Աստուծո մարդանալը՝ հանուն մարդու աստվածացման:

Քրիստոսի հարության և համբարձման հետևանքը եղավ այն, որ հողի ու կավի և լույսի ու հոգու շաղախումից ստեղծված մարդը տեսավ, զգաց ու գիտակցեց իր գոյության իմաստը և կոչումը, սկսեց կամաց-կամաց ազատագրվել կավի կաշկանդումներից ու ձգտել դեպի երկնային լույսը: Մարդը սկսեց հավատալ անտեսանելիին, անըմբռնելիին, անշոշափելիին և զգաց, որ Քրիստոսի լույսով ամեն ինչ դառնում է հասկանալի: Այսպիսով հաստատեց ճշմարտությունը մեծ առաքյալի խոսքի, թե՝ «Ի՞նչ է հավատը, եթե ոչ հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում»: Եվ մարդը կանգնեց կատարելության տանող աստվածացման ճանապարհին: Այսպիսով, մարդը հասավ նախ ազատության: Նա ազատվեց Աստուծո հանդեպ ունեցած սարսափից և Քրիստոսի սիրով եղբայրացավ իր նմաններին՝ առանց ցեղի, ազգի, ունեցվածքի խտրականության: Այսպիսով կամրջվեց մարդու աստվածացման ճանապարհը:

Քրիստոս համբարձավ երկինք նորից գալու՝ իր սերմանածի պտուղները քաղելու խոստումով: Քրիստոս համբարձավ երկինք՝ մարդու համար Աստուծո թագավորության մեջ տեղ ապահովելու համար: Քրիստոս հարյավ և համբարձավ՝ մարդկային հոգու անմահությունը ապացուցելու և ապահովելու համար:

Քրիստոսի համբարձումից տասն օր հետո առաքյալները, որոնք պատվեր էին ստացել «աշակերտել բոլոր հեթանոսներին, մկրտել նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով», ստացան սուրբ հոգին և սկսան իրենց առաքելությունը:

Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները եկան Հայաստան և քարոզեցին Քրիստոսի խոսքն ու լույսը, և պարարտ հող, պատրաստ միտք ու սիրող սիրտ գտնելով՝ ստեղծեցին քրիստոնեական առաջին Եկեղեցիներից մեկը: Հայ ժողովրդի ամբողջական կրոնական դարձը այնքան էլ հեշտ չկատարվեց: Այդ ընթացքը տևեց ավելի քան երկու

հարյուր տարիներ, և կատարվեց հրաշքը՝ ի հետևանս առաքյալների քարոզության: Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Քրիստոս իջավ Հայաստան աշխարհ և հիմնեց իր եկեղեցին Ս. Է՛ջմիածնի վեմի վրա:

Եվ 301 թ. առ այսօր քրիստոսահաստատ Մայր տաճարը դարձավ հայ ժողովրդի համար քարեղեն խորհուրդը, սրբագիր մատյանը և գրավականը նրա հավերժության:

Ս. Էջմիածնի կողքին հաստատվեց Հայաստանյայց Եկեղեցու գերագույն Աթոռը, առաքելական Մայր Աթոռը: Եվ այսօր, երբ Ս. Էջմիածին ենք ասում, հասկանում ենք նաև կաթողիկոսանիստ Մայր Աթոռ, ինչպես Արարատ ասելով հասկանում ենք Մասիսը իր երկու գագաթներով: Ես հատկապես խորհուրդ եմ ասում, որովհետև այս սրբատաշ քարերի, այս Իջման Սուրբ Սեղանի, Հայրապետական այս Գահի մեջ յուրաքանչյուր հայ հավատացյալ անտեսանելիորեն, գուցե նաև անբացատրելիորեն զգում և հավատում է մի գերագույն ուժի, մի աստվածային երևույթի: Եվ հենց դա էլ Ս. Էջմիածնի խորհուրդն է:

Եթե Ս. Էջմիածնի Մայր տաճարը իր հիմնադրումից մինչև այսօր միշտ անշարժ մնացել է իր տեղում, ապա Մայր Աթոռը, կաթողիկոսական գահանիստը այդ բախտը չի ունեցել: Քաղաքական ու տնտեսական պայմանների ստիպողության տակ կաթողիկոսները երբեմն փոխել են իրենց գահանիստը և երկար տարիների տեղափոխությունից հետո՝ Դվին, Աղթամար, Անի և մինչև Սիս, 1441 թ. վերջնականապես Հայրապետական Աթոռը վերադարձել է իր բուն օրրանը՝ Ս. Էջմիածին:

Երբ Կիլիկիայում ստեղծվեց հայկական թագավորություն, այնտեղ վարգացան հայ մշակույթն ու արվեստը, հայ ժողովրդի մի հատվածի հետ Կիլիկիա տեղափոխվեց նաև կաթողիկոսական գահանիստը: Եվ ապա, Կիլիկյան Հայկական Թագավորության կործանումից հետո, Հայ Եկեղեցու հոգևոր դասն ու ժողովուրդը, 1441 թ. Կաթողիկոսական Աթոռը տեղափոխեցին Ս. Էջմիածին: Եվ այսօր Համբարձման տոնին Հայ Եկեղեցին նշում է Կաթողիկոսական Աթոռի Սսից Էջմիածին փոխադրելու 541-րդ տարեդարձը:

Այսօր, երբ մեր վերածնված մայր հայրենիքում Ս. Էջմիածինն ապրում է իր խաղաղ, շինարար կյանքը, երբ Հայ Եկեղեցին հպարտ է իր հոգևոր գործունեությամբ, երբ Հայ Եկեղեցին ունի իր աստվածընտիր Հայրապետը, Որը մեր ժամանակների ոգին ունեցող, Ս. Էջմիածնի խորհրդին հաղորդակից, Ս. Աթոռի արժանի գահակալն է և որը մեզ ուսուցում է և առաջնորդում դեպի աստվածայինը, աղոթենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, բարգավաճման ու Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոսի արևշատության համար: Աղոթենք առ Աստված, որ այլևս երբեք պանդխտություն չտա մեր ժողովրդին ու Հայրապետական գահին:

Թող Տերը խաղաղություն, սեր և եղբայրություն պարգևի աշխարհի ժողովուրդներին: Թող մի գեղեցիկ օր էլ Կաթողիկոսական Աթոռի նման մայր հայրենիք վերադառնա մեր պանդուխտ Արարատը, մեր ժողովրդի հավերժության երկրորդ քարեղեն խորհուրդը: Ամեն:

ԱՐՏԱԿ ՔԱՀԱՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(МАЙ—ИЮНЬ 1982 г.)

1. Приветственная телеграмма Его Святейшества от 7 июня 1982 г. генеральному секретарю ООН Перес Де Куельяру по случаю открытии второй специальной сессии Генеральной Ассамблеи по разоружению (стр. 3).

2. Ответная телеграмма Его Святейшеству генерального секретаря центра разоружения Яна Мартенсона (стр. 4).

3. Слово Его Святейшества на международном конгрессе религиозных деятелей в защиту мира, состоявшемся в Москве 10 мая 1982 года (стр. 5—7).

4. Редакционная статья: Об историческом значении международного конгресса религиозных деятелей, состоявшемся в Москве (стр. 8—10).

5. Его Святейшество в Москве на конгрессе в защиту мира 10—14 мая 1982 года (стр. 11—12).

6. *Архимандрит Анания Арабаджян*—Международная конференция религиозных деятелей в Москве (стр. 13—17).

7. *Слово Его Святейшества*—Все матери—девы.

Статья, опубликованная в журнале «Leaders» в объединенном номере за октябрь—декабрь 1980 г. в США (стр. 18—19).

8. Приветственное послание Его Святейшества съезду армянского духовенства восточной епархии в США, 1 мая 1982 г. (стр. 20).

9. Приветственное слово Его Святейшества собрании делегатов-армян восточной епархии в США 1 мая 1982 г. (стр. 21).

10. Приветственное послание Его Святейшества собрании делегатов-армян Калифорнийской епархии 5 мая 1982 г. (стр. 22).

11. Энциклика Его Святейшества о назначении архимандрита Григориса Бунпатяна местоблюстителем армянской епархии в Буэнос-Айресе (стр. 23—24).

12. Энциклика Его Святейшества о награждении шести зарубежных благотворителей орденом «Св. Григорий Просветитель» (стр. 25—31).

13. Энциклика Его Святейшества по случаю 50-и летнего служения архидъякона Андраника Берберяна (Бухарест) (стр. 32).

14. Энциклика Его Святейшества по случаю 25-летия филиала Армянского Благотворительного всеобщего союза в Монреале (стр. 33—34).

15. Церковная жизнь—сообщения: литургии, произнесенных проповеди и другие церковные обряды, совершенные в Кафедральном Соборе за май—июнь 1982 года (стр. 35—39).

16. Завершающее торжество в Духовной Академии по случаю окончания 1981—1982 учебного года.

Годовой отчет ректора Духовной Академии и благословение Его Святейшества (стр. 40—46).

17. Посещение Тбилиси 25—30 июня архиепископа Сиона Манукяна (стр. 47—48).

18. *Артун Атитян*—Урна с прахом Вильяма Сарояна предается родной земле (стр. 49—50).

19. *Артун Атитян*—Присвоение архимандритского сана в Кафедральном Соборе 7-го мая (стр. 51—54).

20. Экуменическая жизнь — Встреча представителей церквей Восточной Европы в Триесте 6—11 июня. Встреча, организованная Всемирным Советом Церквей в Киеве 22—30 июня. Встреча представителей церквей Восточной Европы в Будапеште 8—11 июня (стр. 55—57).

21. *Эдвардас Межелайтис*—Колоколы Сардарапата. Стихотворение, посвященное победной битве армянского народа против турецких войск 26 мая 1918 года в Сардарапате (стр. 58).

22. *Священник Артак Симонян*—Проповедь, произнесенная в Кафедральном Соборе в день Вознесения Христова (стр. 59—60).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(MAY-JUNE 1982)

1. The cable of His Holiness, dated 7-th June 1982, addressed to Mr. Perez de Cuellar, the general secretary of the Organization of the United Nations, on the occasion of the opening of the Second special session of disarmament of the General Assembly (page 3).

2. The answer of the upper-mentioned cable of His Holiness, sent by Mr. Jan Martenson, the general secretary of the Disarmament commission (page 4).

3. The speech of His Holiness given in the international congress of the clergymen which took place in Moscow on the 10-th of May 1982, in favour of peace (pages 5—7).

4. Editorial devoted to the historical signification of the world congress of the religious workers, which took place in Moscow (pages 8—10).

10. His Holiness in Moscow: during 10—14-th May 1982, in the congress for the defense of peace (pages 11—12).

6. **Reverend Anania Arabadjian**—The world conference of the religious workers in Moscow (pages 13—17).

7. „All mothers are virgin". The article of His Holiness published in the magazine „Leaders" of U.S.A. (united number of October-December 1980)-(pages 18—19).

8. The message of greetings and blessing of His Holiness to the congress of the clergymen of the eastern diocese of U.S.A. Armenian, 1st of May 1982 (page 20).

9. The message of greetings and blessing of His Holiness to the meeting of the delegates of the eastern diocese of U.S.A. Armenians, 1st of May 1982 (page 21).

10. The message of greetings and blessing of His Holiness to the meeting of the delegates of the Armenians' diocese of California, 5-th May 1982 (page 22).

11. The encyclical of His Holiness to Reverend Grigoris Booniatian, member of the congregation of Holy See, on the occasion of his designation as vicar of the Armenian prelacy in Buenos Aires (pages 23—24).

12. The encyclical of His Holiness to six Armenian benefactors in abroad, about the granting by the decoration of „St. Gregory the Illuminator" (pages 25—31).

13. The encyclical of blessing of His Holiness to deacon Antranik Berberian (Bucharest), on the occasion of the 50-th anniversary of his service (page 32).

14. The encyclical of His Holiness to the Armenian General Benevolent Union's Montreal chapter, on the occasion of its 25-th anniversary (pages 33—34)

15. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of May and June (pages 35—39).

16. The annual festivity of the Spiritual Seminary at the end of 1981—1982 school year: the annual report of the rector and the speech of blessing of His Holiness (pages 40—46).

17. The visit of Archbishop Sion Manookian at Tbilisi during the days of 25—30-th June (pages 47—48).

18. **Arthoon Hadidian**—The delivery of the urn to the mother land of William Saroyan's ashes (pages 49—50).

19. **Arthoon Hadidian**—The delivery of the special doctrinal power in the Holy See, during 7 th of May (pages 51—53).

20. Ecumenical life: The meeting of the representatives of the churches of Eastern Europe in Trieste during the days of June 6—11. The meeting organized by the World Council of Churches in Kiev during the days of June 22—30. The meeting of the representatives of the churches of Eastern Europe in Budapest during the days of June 8—11 (pages 54—57).

21. **Edwardas Mejelaydis**—The bells of Sardarapat: poetry devoted to the victorious battle of the Armenian people against Turkish powers in Sardarapat on 26-th May 1918 (page 58).

22. **Father Artak Simonian**—Sermon given in the Holy Cathedral: on the festival of Christ's Ascension (pages 59—60).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MAI-JUIN 1982)

1. Télégramme du 7 juin 1982 de Sa Sainteté Vasken Ier adressé à M. Perez de Cuellar, Secrétaire Général de l'Organisation des Nations Unies, à l'occasion de l'ouverture de la deuxième session extraordinaire de l'Assemblée générale consacrée au désarmement (page 3).

2. Réponse au télégramme de Sa Sainteté par Jan Martenson, Secrétaire général de la Commission pour le désarmement (page 4).

3. Allocution de Sa Sainteté prononcée à la Conférence internationale interreligieuse: „Les hommes de religion pour la protection du don sacré de la vie de la catastrophe nucléaire" tenue du 10 au 14 mai 1982 à Moscou (pages 5—7).

4. Editorial relevant l'importance historique de ladite Conférence (pages 8—10).

5. Participation de Sa Sainteté à la Conférence interreligieuse de Moscou consacrée au maintien de la paix (pages 11—12).

6 **Père Anania Arabadjian**—„La Conférence internationale interreligieuse de Moscou" (pages 13—17).

7. „Toutes les mères sont vierges" (article de Sa Sainteté publié dans le numéro octobre-décembre 1980 de la revue „Leaders", U.S.A.)-(pages 18—19).

8. Message de Sa Sainteté au Congrès des ecclésiastiques du l'Assemblée des diocèse des Arméniens des U.S.A. (région orientale) tenue le 1er mai 1982 (page 20).

9. Message de Sa Sainteté adressé l'Assemblée des délégués du diocèse des Arméniens des U.S.A. (région orientale) tenue le 1er mai 1982 (page 21).

10. Message de Sa Sainteté adressé à l'Assemblée des délégués du diocèse des Arméniens de Californie tenue le 5 mai 1982 (page 22).

11. Dans l'Encylique du 17 juin 1982 de Sa Sainteté le Père Grigoris Bouniatian, membre de la congrégation du Saiut-Siège d'Etchmiadzine, est nommé vicaire du prélat des Arméniens à Buenos Aires (pages 23—24)

12. Encycliques de Sa Sainteté annonçant l'attribution de l'ordre de „Saint Grégoire l'Illuminateur" à certains bienfaiteurs arméniens de la Diaspora (pages 25—31).

13. Encyclique du 2 juin 1982 de Sa Sainteté adressée au diacre Andranik Berbérian à l'occasion du 50e anniversaire de ses activités ecclésiales (page 32).

14. Encyclique du 16 juin 1982 de Sa Sainteté publiée à l'occasion du 25e anniversaire de la fondation à Montréal de la filiale de l'Union Générale Arménienne de Bienfaisance (pages 33—34).

15. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois mai-juin 1982 (pages 35—39).

16. Description des cérémonies consacrées à la clôture de l'année scolaire 1981—1982 du séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine. Compte rendu annuel du recteur et discours de Sa Sainteté adressé aux séminaristes (pages 40—46).

17. Visite de l'archevêque Sion Manoukian à Tbilisi du 25 au 30 juin 1982 (pages 47—48).

18. **Artoun Hatitian**—„Le transfert des cendres de l'écrivain William Saroyan à la Mère patrie" (pages 49—50).

19. **Artoun Hatitian**—Collation du degré de docteur particulier en théologie au Saint-Siège d'Etchmiadzine (7 mai 1982)—(pages 51—51).

20. Vie oecuménique:

a) Le colloque pour les Eglises de l'Europe méridionale et de la région danubienne tenu à Triestē du 6 au 11 juin 1982.

b) Consultation organisée à Kiev par le Conseil Oecuménique des Eglises (du 22 au 39 juin 1982).

c) La conférence préparatoire des représentants des Eglises de l'Europe orientale tenue à Budapest dn 8 au 12 juin 1982 (pages 53—57).

21. **Edouardas Megelaïdis**—„Les cloches de Sardarapat" (poème dédié à la mémoire de la victoire remportée par les Arméniens contre les forces turques le 26 mai 1918 à Sardarapat)-(page 58).

22. Sermon du Père Artak Simonian prononcé dans la cathédrale du jour de l'Ascension de Jésus-Christ (pages 59—60).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց Հայրապետի ողջույնի և օրհնության հեռագիրը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դե Կուելյարին՝ գլխավոր ասամբլեայի՝ վինաթափման համար երկրորդ հատուկ նստաշրջանի բացման առիթով 3

Հայոց Հայրապետի 7 հունիս 1982 թվականի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ վինաթափման համար երկրորդ հատուկ նստաշրջանի բացման առիթով ուղարկած հեռագրի պատասխանը 4

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի խոսքը հոգևորականաց միջազգային համագումարին՝ նվիրված խաղաղության պաշտպանությանը . . 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Մոսկվայում գումարված կրոնական գործիչների համաշխարհային համագումարի պատմական նշանակությունը 8

Հայոց Հայրապետը Մոսկվայում 11

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանս Մոսկվայում 13

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ. Բոլոր մայրերը կույս են 18

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը ԱՄՆ-ի արևելյան թեմի հոգևորականաց համագումարին 20

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը ԱՄՆ-ի արևելյան թեմի թեմական պատգամավորական ժողովին 21

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը Կալիֆոռնիայի հայոց թեմի պատգամավորական տարեկան ժողովին 22

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մայր Աթոռի միաբան Տ. Գրիգորիս վարդապետ Բունիթյանին Բուենոս Այրեսում առաջնորդական տեղապահ նշանակելու մասին 23

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ կոնդակը տիար Գրիգոր Փափազյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 25

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ կոնդակը տիար Տիգրան Փափազյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 26

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Սերժ Մանուկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 27

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տիար Կարպիս Մանուկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 28

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ կոնդակը տիար Ավետիս Չագրճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու առիթով 29

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ կոնդակը տիար Բոլ Քիլիտճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու առիթով 30

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ օրհնության կոնդակը Անդրանիկ ավագ սարկավագ Բերբերյանին՝ նրա 50-ամյա ծառայության առիթով 32

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ կոնդակը Մոնրեալի Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղի 25-ամյակի առիթով 33

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 35

ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում . . 40

Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի այցելությունը Թբիլիսի 47

Ա. Հ.—Վիլյամ Սարոյանի աճյունասափորի հանգրվանումը մայր հողում . . . 49

Մասնավոր վարդապետական իշխանության տվչություն 51

Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպում Տրիեստեում 53

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կազմակերպած հանդիպումը Կիև քաղաքում 55

Արևելյան Եվրոպայի Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպումը Բուդապեշտում 56

ԷԴՎԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ—Սարդարապատի վանքերը 58

ԱՐՏԱԿ ՔԱՀԱՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ—Համբարձման տոնը 59

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61

„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62

„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 17.6.1982 թ.: Ստորագրված է տպագրության 30.07.1982 թ.

Տպագրական 4 մամուլ+7 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 508:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.